1897 ՄԱՐՏԻ 23 (Ապր. 4) ԿԻՒՐԱԿԻ

№. 34 - ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№. 34

1897 ՄԱՐՏԻ 23 (Ապր. 4) ԿԻՒՐԱԿԻ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը:
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.:
Առանձին համարը 7 կոպէկ:
Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»:
Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ“.
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang“.

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամէնայն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից):
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԱՐՁԱԳԱՆՔ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
(ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ)
Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդալամեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»:
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ԹԷ՛ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԹԷ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ, 6 ԱՄՍՈՎ 6 ՌՈՒԲԼԻ, 1 ԱՄՍՈՎ 1 ՌՈՒԲԼԻ
Օտարքաղաքացիք պէտք է գրեն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“. Իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien „Ardzagang“
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով:

ԲԺԻՇԿ Գ. Ս. ԳԵՐՑՖԵԼԴ
(Միքայէլեան փողոց, № 121)
որը պարապել է իւր մասնագիտութեամբ Վիեննայում. ընդունում է կաշուի, վեներական, սեռական և սիֆիլիսով հիւանդներին ամենայն օր, առաւօտեան ժամը 9—12 և երեկոյեան ժամը 5—9: (10—10)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արևելեան խնդիրը:
Տպաւորութիւն:
Վերջին դէպքերը Թիւրքիայում:
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Գեներալ-լէյտենանտ Փրեզէ: Հայոց Հրատարակչական ընկերութիւն: Մաղնոս Ս. Գէորգ եկեղ. Ծխականների ժողով: Ժանտախտի վտանգ: Վրաց հեղինակների կենսագրութիւններ: Հեղեղի երկիւղ Կուբանի շրջանում: Ինքնաշարժ կառքեր: Նամակ ս. Էջմիածնից: Ոչ մի գրպէտ: Մի կարևոր խնդիր Բագուի համար:
ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՖԷԼԻԷՏՕՆ.—Քիւրդերի գրականութիւնը և արհեստը:
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.—Նամակ Թաւրիզից:
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԶԱՆԱԶԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ

ԹԻՒՐՔԻԱ, ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ԵՒՐՈՊԱ

Արևելեան խնդիրը, որ սպունգի առաձգականութեամբ սեղմուել էր և դարձել «Կրետական խնդիր», այժմ նոյն առաձգական արագութեամբ կրկին լայնանում է, տարածելով իւր սահմանները Կրետէից շատ հեռու: Նոյն իսկ լրագրական սիւնակների մէջ վերջին օրերս չեն երևում այն բազմաթիւ տեղեկութիւնները, որոնք կայծակի արագութեամբ միմեանց հետևում էին Կրետէի զանազան կէտերից: Կարծէք թէ մի փաստի հետ հաշտուել է մամուլը, այն է թէ Կրետէին պետութիւնները ոչինչ չեն կարող անել, այլ ինքը Կրետէն ինչ որ կամենայ, այն պիտի լինի: Եւ արդարև ապստամբները շարունակում են մնալ իրանց դիրքերում և յարձակումն գործել տաճկական բերդերի վրայ, մինչև անգամ գրաւել նրանց: Յունական նաւերը չնայելով կղզու պաշարուած դրութեան, կարողանում են պաշար և զէնք հասցնել ապստամբներին: Այդպէս Կրետէն մնում է իւր համար և մամուլը կարծէք արդէն ժամանակ է համարում այդ կղզու համար միայն պատմական և աշխարհագրական տեղեկութիւններ հաղորդել. . . Սակայն դրա փոխարէն ամեն կողմից ձայներ են լսվում Թիւրքիայի բաժանման մասին, անհամբերութեան աղաղակներ են լըսվում «չպաշտպանել այլ ևս նրան, որ ինքզինքը չէ կարող պաշտպանել» հայլն հայլն: Մինչդեռ պետութիւնները աշխատում են մի կերպ հաշտեցնել կրետացիներին և յոյներին սուլթանի գերիշխանութեան գաղափարի հետ, յանկարծ բօթ է հասնում Փոքր-Ասիայի հայկական գաւառներից թէ՝ հայերի մէջ կրկին կոտորածներ են սկսուել և վտանգ կայ, որ այդ կոտորածները աւելի լայն ծաւալ կըստանան: «Սարսափը տարածուած է ամբողջ Փոքր-Ասիայում» վկայում է անգլիական հիւպատոսի պաշտօնական զեկուցումը:

Վառօդով և նաւթով օծած, վատ, խարխուլ շինութեան պէս՝ Թիւրքիան ոչ մի կերպ հնար չի լինում ապահովել հրդեհից. երբ ջանում են հանգցնել նրա մի անկիւնում ծագած հրդեհը, նոյն իսկ այդ ջանքերից թռած կայծը նոր հրդեհ է ծագեցնում նրա մի այլ անկիւնում և սպառնում է համակել ամբողջ շինութիւնը, որի ներսի սիւները վաղուց են փտել և կորցրել որևէ ծանրութեան դիմանալու ընդունակութիւնը: Նոյն իսկ եւրոպական «կոնցերտը»—չնայելով բոլոր պետութեանց միահամուռ ցանկութեան—հնար չի լինում անխախտ պահել և վերջին տեղեկութիւններն արդէն ցոյց են տալիս, որ այդ կոնցերտը խախտուել է: Անգլիայում խնդիրը լարման այն աստիճանին է հասել, որ մինչև անգամ խօսք է լինում Սօլզբիւրիի նախարարութեան անկման մասին: Այս ամենը խօսակցութեան տեղիք է տալիս եւրոպական մամուլին և նոր յոյսեր ոչ միայն Յունաստանին, այլ և Բալկանեան թերակղզու ուրիշ մանր ազգերին, որ, ինչպէս կըտեսնէ ընթերցողը ներկայ համարի քաղաքական լուրերից, արդէն «դաշն» են կապում Յունաստանի հետ:

Այդ յոյսերի առթիւ «Times»-ի Աթէնքի թղթակիցը գրում է թէ՝ այնտեղ համոզուած են, որ պետութեանց համաձայնութիւնը արդէն խախտուած է, Անգլիայի և Ռուսիայի մէջ ծագել են տարաձայնութիւններ և Սօլզբիւրիի կաբինետի օրերը համրուած են: Իսկ եթէ այդ լուրը ճշտուի և այժմեան նախարարութեան փոխարէն անգլիական կառավարութեան ղեկն անցնի ազատամիտ կուսակցութեան ձեռքը՝ յայտնի է թէ նրանք ինչ պիտի անեն, եթէ միայն հաւատարիմ մնան իրանց վերջին խօսքերին Թիւրքիայի վերաբերմամբ: Բայց առանց այդ էլ, մեծ ուշադրութեան արժանի է «Daily News»-ի այն լուրը թէ՝ լորդ Սօլզբիւրին հաւանութիւն տուաւ ազատամիտ կուսակցութեան կարծիքներին և մինչև անգամ յոյս տուաւ, որ նրանց պահանջները Թիւրքիայի վերաբերմամբ կ՚իրականանան: Երևի այդ նշանաւոր տեղեկութեան ազդեցութեան տակ է, որ սուլթանը իւր մինչև ցայսօր ոչ մի անգամ չարած քայլն արաւ այժմ՝ առաջին անգամ «գլիշանելով» անմիջական բանակցութիւն սկսելու Յունաստանի հետ:

Տեղիք չկայ հաւատ չընծայելու յունական «Էֆիմերիս» կառավարչական լրագրին, որ պաշտօնապէս հաղորդում է հետևեալը. «սուլթանը ցանկանալով եւրոպական խաղաղութիւնը պահպանել (sic) առաջարկեց թէ ինքը պատրաստ է յետ կանչել իւր զօրքերը Կրետէից և կղզին յանձնել Գէորգ թագաւորին, այն պայմանով, որ Յունաստանը գրաւէ Կրետէն և կառավարէ, սուլթանին միայն որոշ հարկ վճարելով, ի նշան նրա գերիշխանական իրաւանց կղզու վրայ: Այս առաջարկութիւնը կատարելապէս գոհացնում է թէ սուլթանին եւ թէ կղզու մահմեդականների ղեկավարներին: Սակայն պետութիւնները կամ պետութիւններից ոմանք յանկարծ դադարեցրին այդ բանակցութիւնները: Գերմանական և աւստրիական դեսպանները բոլոր իրանց ույժը գործադրեցին, որպէսզի արգելք լինեն Դրան և Յունաստանի մէջ այդ համաձայնութեան կայանալուն, իսկ Հանօտօ և Լորդ Սօլզբիւրի այդ համաձայնութեան կողմն են: Այս բոլորից երևում է, որ կասկած չկայ թէ այսպէս անուանուած եւրոպական համաձայնութիւնը խախտուած է և Թիւրքիայի խնդիրը միայն դրանով է մօտենում իւր վախճանին:

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Նորոգուած «Կավկազ» լրագրի № 73-ը գրեթէ ամբողջապէս նուիրուած է հայերին: Համարեա նոյն բնաւորութիւնը ունէին նախավերջին և նախորդ համարները: Այդ առանձին ուշադրութիւնը հայերիս վրայ սկսեց «Կավկազը» գրեթէ իւր նորոգութեան առաջին՝ իսկ քայլերից և, կարծեօք, գաղտնիք չէ այժմ, որ պ. Վելիչկօն մեր երկրում մի արշաւանք է ձեռնարկում «խիտ համախմբուած, խորամանկութեամբ կազմակերպուած մի խումբ մարդկանց դէմ, որոնք սովոր են անկօնտրօլ և ինքնագլուխ տիրութիւն անել» և այդ մի խումբ մարդիկ հայերն են:

Դեռ հազիւ թևակոխած իւր վերակազմութեան երկրորդ ամիսը, պ. Վելիչկօյի օրգանը արդէն մի նշանաւոր գիւտ արաւ: «Կովկասում զանազան ազգերի փոխադարձ յարաբերութիւնները կանոնաւորուած չեն»: Եւ ահա պ. Վելիչկօն ձեռնարկում է այդ գործը կանոնաւորելու և սկսում, ինչպէս և պէտք է, կենտրոնից»: Կովկասի բուժումը բնականապէս, ասում է նա, պէտք է սկսել Թիֆլիզից, ուր կենտրոնացած է չարի և բարու "աղբիւրը»:

Դուք կարծում էք, ընթերցող, որ նորոգուած օրագիրը սկսել է քննել Կովկասի կենտրոնը ոտքից մինչև գլուխ և անվեհերութեամբ մարտնչում է «չարութեան աղբիւրի» դէմ, մատչելի անելով ամենքին բարութեան աղբիւրը: Ո՛չ, Կովկասի մայրաքաղաքում գտաւ նա չարութեան միակ աղբիւրը, որից պէտք է սկսել ամբողջ երկրի բուժումը, դա է քաղաքային ինքնավարութիւնը: Զարմանալի է, թէ ինչպէս ամբողջ երկրի հիւանդութիւնը կարող է ամփոփուել Թիֆլիզի քաղաքային վարչութեան հիմնարկութիւններում, որոնք միմիայն Թիֆլիզում են գործում և քաղաքի սահմանից չեն անցնում: Սակայն հետևենք նոր բժշկի գիւտնոցին:

Թիֆլիզի քաղաքային վերջին ընտրութիւնների միակողմանիութիւնը մենք մատնացոյց ենք արել նոյն իսկ ընտրութիւններից առաջ և բողոքել այն մարդկանց դէմ, որոնք իրանց անձնական շահերի համար նպաստեցին այդ միակողմանի ընտրութեանը: Նոյն երևոյթի դէմ բողոքեցին և գրեթէ բոլոր միւս տեղական լրագիրները: Բողոքեցինք և այն բանի դէմ, որ վաճառականական գերակշռութիւնը վերագրում են ազգութեան ձգտումներին: Եթէ նոյն արդարամտութեամբ նայէր պ. Վելիչկօն այդ հարցին, մենք մի զինակից աւելի կունենայինք: Դժբաղդաբար պակասաւոր երևոյթի իսկական աղբիւրը թողած, այդ նորեկ հրապարակախօսը վերագրեց բոլորը ցեղական անկանոն յարաբերութիւններին:

Յայտնի է, որ քաղաքային ինքնավարութեան վերջին կանոնադրութիւնը ամբողջապէս յանձնում է քաղաքի գործերը նրա վաճառական և կալուածատիրական տարրերին, ամենայն հետևողութեամբ հեռացնելով միւս, յաճախ աւելի ինտելիգենտ տարրերին: Այդ երևոյթը նըկատուած է ամբողջ Ռուսաստանում առանց բացառութեան: «Զարմանալի բան, նկատել է միանգամ «Նով. Վրեմիան», մեր նախարարներից ոչ մէկը ոչինչ առնչութիւն չունի վաճառական դասի հետ, որին անհասկանալի գերակշռութիւն է տալիս քաղաքային ինքնավարական գործերում, որի շահերը շատ անգամ հակառակ են քաղաքի իսկական շահերին»:

Մենք բոլորովին համամիտ ենք այդ կարծիքներին. քաղաքային սընտեսութիւնը Ռուսիայում ամենուրեք ընկել է այդ դասակարգի ձեռքը, Պետերբուրգում, թէ Օդեսայում, առաջնակարգ Մոսկվայում, թէ յետնած Շամախում:

Թիֆլիզի վաճառականների և կալուածատէրերի մեծամասնութիւնը հայերն են: Ռուս տարրը ունի մի որոշ մաս կալուածքների քաղաքամասում, իսկ վրացիք մասամբ միայն կ՚ալուածատէր են և նոցա շատ սակաւ մասը վաճառական և արհեստաւոր է: Հասկանալի է, որ ռուս տարրի ամենաինտելիգենտ մասը, ինչպէս և վրացի, ինչպէս նաև հայ տարրի՝ համաձայն օրէնքի զերծ պիտի մնան քաղաքային ինքնավարութեան գործերի վրայ ազդեցութիւն ունենալուց: Չենք կարող չարձանագրել այստեղ, որ այդ կողմից Թիֆլիզը աւելի լայնահայեաց է գըտնուել, քան նոյն իսկ Մոսկվան և Պետերբուրգը:

Եթէ այս միակ ուղիղ տեսակէտից քննէր պ. Վելիչկօն մեր քաքաղաքային ինքնավարութեան միակողմանիութիւնը, այն ժամանակ նա կարիք չէր ունենայ դրացին դրացու դէմ գրգռելու: Սակայն պ. Վելիչկոյի գիւտից իմանում ենք, որ այդ երևոյթը ցոյց է տալիս «ցեղական յարաբերութիւնների անկանոնութիւն», «կազմակերպած խմբի չարանենգութիւն» և այլ այնպիսի ակնարկներ հայերի դէմ, որ բոլորովին վայել չէ ազնիւ մամուլին:

Նոյն պատճառով քաղաքային ինքնավարութիւնները ամեն տեղ տառապում են միատեսակ պակասութիւններով՝ Բաթումում և Փօթիում, Բագւում և Գանձակում, Քութայիսում և Երևանում: Բայց պ. Վելիչկօն մի խօսք անգամ չէ ասում Բաթումի, Քութայիսի, Փօթիի և այլն քաղաքների մասին: Բաթումում հայերը տապալուեցան բոլորովին. Նա արշաւանք չէ սկսում այդ անարդարութեան դէմ: Իսկ Թիֆլիզում հայերը մեծամասնութիւն են կազմում, դորա դէմ նա բողոքում է: Ուրեմն՝ ուր կայ հայ, ուր հայ գործում է, վնասակար է. իսկ ուր հայը բացակայ է, կամ տապալուած, դա հիանալի է: Ահա պ. Վելիչկոյի արշաւանքի իսկական աղբիւրը, որ ոչինչ առնչութիւն չունի քաղաքի իսկական շահերի հետ, միմիայն ցեղական ատելութիւն կարող է յարուցանել երկու դրացի ազգերի մէջ, ուստի և հազիւ թէ «բարու աղբիւր» լինի:

Այդտեղ էլ կանգ չէ առնում պ. Վելիչկոյի օրգանն և ահա՝ ինչ լուսաբանութիւն է տալիս: Հայկական քաղաքային ինքնավարութիւնը Թիֆլիզում հալածում է ռուս և վրացի տարրերին, զրկելով վերջիններին աշխատանքի միջոցներից, յօգուտ հայկական տարրին: Ահա Կովկասի հիւանդութեան նշանը, «խիտ համախմբուած» և «խորամանկութեամբ կազմակերպուած» «ինքնագլուխ և անկօնտրօլ» գործող հայերը, որտեղ նրանք գոյութիւն ունեն, այնտեղ չարի աղբիւր է, այնտեղ ամեն բան վատ է: Ուրտեղ նրանք չկան, կամ սակացրած են, այնտեղ ամեն բան հիանալի է և «յոյժ տենչալի»:

Դրանից յետոյ ինքն ըստ ինքեան հասկանալի է, թէ ինչպէս պէտք է «չարի աղբիւրը» կտրել և բարին հաստատել, այն է ծորել երկիրը այդ չարից, սահմանափակել հայերի իրաւունքները... վաղուց ծանօթ աղաղակ, որ լսում ենք ամեն օր ռուս խաւարամիտներից (և միթէ միայն մենք) և բաւական ընտելացել ենք:

Սակայն մի բան կատարելապէս հերքուած պէտք է համարել և այն ամենաճիշտ փաստերով,—չնայած քաղաքական միակողմանի ընտրութիւններին՝ Թիֆլիզի քաղաքային ինքնավարութիւնը ոչ մի կերպով չէ հալածել ոչ վրացի և ոչ ռուս տարրերին: Այդ տեսակէտից պ. Վելիչկոյի և Ընկ. պնդածը բոլորովին անփաստ դուրս եկաւ և հերքուեցաւ «Նով. Օբ.» բերած վիճակագրական թուերով: Այդ խոստովանում է մասամբ և ինքը պ. Վելիչկօն, յայտնելով թէ առ այժմս չէ կարող իւր պնդածը փաստերով հաստատել, կամ հակառակորդների բերած թուերը հերքել ըստ պատշաճին:

Մենք անկեղծ ցանկանում ենք, որ նոր ընտրութիւնները ուղղեն նախկին ընտրութիւնների սխալը. մեր տենչանքն է, որ հայ ինտելիգենտը ձեռք ձեռքի տուած համերաշխութեամբ գործէ վրացի և ռուս ինտելիգենտի հետ և ոչ միայն Թիֆլիզի քաղաքային ինքնավարութեան նեղ ասպարիզում, այլ երկրի առաջադիմութեան նպաստող ամեն մի հիմնարկութեան մէջ: Մենք ցանկանում ենք, որ երկրիս բոլոր ազգութիւնները հաւասարապէս վայելեն մեր հարուստ երկրի բարիքը և այդ դէպքում հաւասարութիւնը և արդարութիւնը մեր տենչալի բաղձանքն է և մեր քարոզածի նշանաբանը:

Ա՛յլ է արդեօք պ. նորեկ հրապարակախօսի ձգտումը, քարոզո՞ւմ է նա արդարութիւն և հաւասարութիւն ամեն մի ասպարիզում և հայերի վերաբերմամբ:

Ահա մի հարց, որին մենք մեր ընթերցողին բացասական պատասխան պիտի տանք, ի նկատի ունենալով նորոգուած «Կավկազի» երկու ամսուայ գործունէութիւնը: Մեզ մնում է փաստերով հաստատել մեր այդ բացասական պատասխանը մեր ընթերցողին, որ և կըկատարենք յետագայ համարներից մէկում:

N. N.

ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

ՅՈՅՆ—ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ Կ. ՊՕԼՍՈՒՄ

„Berl. Tagebl.“ թղթակցի ասելով Կ. Պօլսում մեծ երկիւղ է տիրում: Եւրոպական մի զինուորական բարձր պաշտօնեայ թղթակցին յայտնել է, թէ ընդհանուր պատերազմը անխուսափելի է: Խօսում են թէ Թեսաղիում թուրքերի և յոյների մէջ ընդհարումներ են եղել:

Հայ-յունական կոմիտէի կազմուելու լուրը ճշտվում է: Խօսք կայ որ շուտով ցոյցեր անելու պատրաստութիւններ են տեսնվում: Սուլթանը նոր իրատէ հրատարակեց, որով կրկին 40 բատալիոն զինուորներ զէնքի են հրաւիրվում.

Կ. Պօլսի փողոցներում շրջում են քրդերի խմբեր և ազգաբնակութեան կասկած են պատճառում:

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ ԹԻՒՐՔ-ՅՈՒՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՎՐԱՅ

Շարունակ աճում է թուրքերի և յոյների ընդհարման վտանգը: Այս օրերս, ինչպէս հաղորդում են Աթէնքի լրագիրները, յունական թագաժառանգը կըգայ սահմանագլուխ և նրա Լարիսում երևալը աւելի կըբորբոքէ յոյն զօրքերի հայրենասիրական զգացը: Աթէնքում արդէն պաշտօնապէս լուր է ստացուած թէ մի ընդհարումն տեղի ունեցաւ Արտում: Թիւրքիայից եկող յոյն կամաւորները, երբ պիտի անցնէին սահմանը, հանդիպեցին թուրք սահմանապահ զօրքերին, որոնք կրակ բացին յոյների դէմ. վերջիններս նոյնպէս պատասխանեցին հրացաններով և վերջ ի վերջոյ կարողացան հասնել յունական բանակը: Վտանգ կայ որ այդպիսի դէպքերը կըկրկնուին և աւելի ծանր հետևանքներ կունենան:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՏԱՆԳԸ ԹԵՍԱՂԻԱՅԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Թուրք-յունական սահմանագլխում արդէն երկիւղ կայ ընդհարման, որովհետև, ինչպէս հաղորդում են լրագիրները, ուրբաթ օրը յունական թագաժառանգն ուղևորուել է դէպի սահմանագլուխ: Ինչպէս երևում է թագաժառանգ Գէորգի սահման գընալը կատարվում է յոյն կառավարութեան ցանկութեան հակառակ՝ զինուորական կուսակցութեան ճնշմամբ: Թագաժառանգի Աթէնքից դուրս գալը նշանակուած էր առաւօտեան շատ վաղ, ժամը 4-ին, որպէս զի ժողովուրդը ժամանակ չունենայ ցոյցեր անելու: Օպօզիցիայի օրգան լրագիրները արդէն վաղուց էին սկսել յարձակուել կառավարութեան վրայ, պնդելով թէ վաղուց ժամանակ էր ուղարկել սահմանագլուխ թագաժառանգին:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՊԵՏՈՒԹԵԱՆՑ ՌՈՒՄԲԵՐԸ ՅՈՅՆԵՐԻ ԲԱՆԱԿՈՒՄ

Վերջին փոստով ստացուած արտասահմանեան լրագրներում մանրամասն նկարագրուած է Մալաքսի ռմբակոծութիւնը, որի մասին հեռագիրը հաղորդել էր: Երբ յայտնուեց թէ ապստամբները յարձակուել են Մալաքսի տաճկական մարտկոցի վրայ և վերցրել, եւրոպական նաւատորմիղների ծովակալները կէսօրից յետոյ խորհուրդ կազմեցին և վճռեցին ռմբակոծել ապստամբների բանակը: Մի ժամից յետոյ պայթեց առաջին ռմբի հարուածը իտալական „Giovanni Ransau“ մարտանաւից և ռումբն ընկաւ ապստամբների բանակի մէջ տեղը, երկրորդ հարուածը տուաւ գերմանական „Kaiserin Augusta“ մարտանաւը և ապա հերթով սկսեցին ռմբակոծել միւս պետութեանց մարտանաւերը: Ընդամենը ձգուեց 123 ռումբ: „Kaiserin Augusta"-ից ձգուած ռումբը ջարդեց ապստամբների մարտկոցի մի մասը, իսկ աւստրիական մարտանաւը վերջացրաւ աւերածը՝ հրդեհ ձգելով բանակը: Մարտկոցին հեռադիտակով նայելիս տեսնվում էր թէ ինչ իրարանցումն կար ապստամբների բանակում, երբ նրանց գլխին սկսեցին թափուել ռումբերը: Ապստամբներից կոտորուած են 200 հոգի: Չնայելով այդ բոլորին՝ ապստամբները տիրեցին ամրոցին: Ռմբակոծութեան ժամանակ, այս անգամ ևս ապստամբների բանակում սպանուած են մի քանի իտալացի կամաւորներ, այդ մասին իտալական նաւատորմիղի ծովակալը տեղեկացրեց իւր կառավարութեան:

ԳԵՐՄԱՆԱՑԻ ԳՕԼՑ ՓԱՇԱՆ ԳԼԽԱՒՈՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ԹՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ

«Հաւասի գործակալութիւնը» հաստատում է, թէ այժմ այլևս կասկած չկայ, որ սուլթանն առաջարկել է Գերմանացի գեներալ Գօլց փաշային յանձն առնել թուրքական զինուորական բանակի ընդհանուր հրամանատարութիւնը: Այդ մասին բանակցութիւնները վարվում էին գեներալ Գօլցի, սուլթանի պալատի և Բեռլինի տաճկական դեսպանի միջև:

Գօլց փաշան իւր կողմից առաջարկել է հետևեալ պայմանները.

1) Գերմանական կայսեր համաձայնութիւնը:

2) Ինքը Գօլց փաշան ուղղակի գնում է պատերազմի դաշտը, առանց Կ. Պոլիս մտնելու:

3) Իրան, Գօլց-փաշային, պիտի տրուի լիակատար, անկախ իրաւունք և նա ոչ մի հրաման չպիտի ստանայ ոչ պալատից, ոչ թուրք նախարարներից:

4) Գօլց-փաշային պիտի տրուի բարձրագոյն գեներալի աստիճան, որ համապատասխանի ֆելդմարշալի հրամանատարի պաշտօնին Գերմանիայում:

5) Գօլց-փաշան իւր միսիան վերջացնելուց յետոյ կը վերադառնայ Գերմանիա, չմտնելով Կ. Պոլիս»:

„Times"-ի ասելով, Վիլհելմ կայսրը իւր կողմից համաձայնութիւն է տուել Գօլց-փաշայի տաճկական բանակը փոխուելուն...

ՆԱՒԻ ԳԵՐՈՒԹԻՒՆ

Մարտի 5-ին Պիրէյից յունական երեք նաւեր մեկնել են դէպի Կրետէ՝ այնտեղի յոյներին պաշար հասցնելու համար: Նոցանից երկուսը իրանց բեռը ափ հանելով՝ յաջողութեամբ վերադարձել են: Իսկ երրորդի մասին երկար ժամանակ լուր չկար: Չորեքշաբթի երեկոյ վերջապէս լուր է եկել, որ նաւին յաջողուել է իւր բեռնից մի մասը ափը հանել, բայց յետոյ, երբ կղզու մի ուրիշ կողմն է գնում, բռնվում է փոթորկից և պարտաւորվում մտնել ծոցերից մէկը: Այստեղ նաւը ձերբակալվում է աւստրիացի զրահաւորից:

ԹՈՒՐՔ ԳԵՐԻՆԵՐԸ ՅԵՏ ԵՆ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ

Կրետացի այն թուրք գերիները, որոնք Յունաստանումն էին պահվում, այս օրերս դրուել են մի նաւ, որ նրանց պէտք է տանի թիւրքաց նաւահանգիստներից մէկը:

ՍՈՒԼԹԱՆԻ ԹՆԴԱՆՕԹԸ

Լարիսայից հաղորդվում է, թէ մի ծանր դէպք տեղի ունեցաւ Թիւրքիայի Ելլասոնի բանակում: Մի թնդանօթ պայթեց՝ սպանելով մի պաշտօնեայ և 8 զինուոր:

ՍՈՒԼԹԱՆԻ ԲԱՆԱԿԸ

Թիւրքիայի յունական սահմանագլխի վրայ հաւաքուող զօրքերի համար պաշար ձեռք բերելու խնդիրը արդէն բաւական դժուարացել է: Բանակի ընդհանուր հրամանատար Էդհէմ փաշան հեռագրել է, որ այլևս զօրք չուղարկուի այդտեղ՝ պաշարի չգոյութեան պատճառով: Ասվում է, թէ Էդհէմ փաշան երկու անգամ իւր հրաժարականը տուել է, սակայն չէ ընդունուած:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ուրբաթ, ամսոյս 21-ին, երեկոյեան 6 ժամին, քաղաքս ժամանեց Կովկասեան կառավարչապետի օգնական գեներալ-լէյտենանտ Փրեզէն:

* * *

Ստացանք «Թիֆլիզի հայոց հրատարակչական ընկերութեան 1896 թ. գործունէութեան տեղեկագիրը». Շատ ուրախալի է, որ ընկերութիւնը իւր գործունէութեան նկատմամբ տպագրուած հաշիւ է ներկայացնում հասարակութեան և դրանով դիւրութիւն է տալիս անդամներին՝ մինչև ընդհանուր ժողովը՝ ծանօթանալ ընկերութեան գործունէութեան: Ցանկալի էր, որ Հայոց Բարեգործական Ընկերութեան խորհուրդը այդ կողմից օրինակ առնէր Հրատարակչական Ընկերութիւնից:

Հրատարակչական ընկերութեան տեղեկագիրը կազմուած է մանրամասն, այնպէս որ ընդհանուր պատկեր է տալիս թէ նրա իսկական գործունէութեան և թէ ապագայ խոստումների—ի հարկէ աւելի ապագայ խոստումների—վրայ:

Սակայն տեղեկագրի մէջ հէնց առաջին երեսից հանդիպում ենք մի թիւրիմացութեան: Բովանդակութեան մէջ կարդում ենք, որ տեղեկագրի մէջ տպագրուած է «Մարտի 17-ի ընդհանուր ժողովի արձանագրութիւնը», սակայն դրա փոխարէն տպագրուած է 1895 թուի ապրիլի 30-ի ընդհանուր ժողովի արձանագրութիւնը:

Տեղեկագրից երևում է, որ ընկերութիւնը 1896 թուականի ընթացքում ունեցել է 542 անդամ, որոնցից 28 մշտական և 514 իսկական, բացի աշխատակից անդամներից, և հրատարակել է 14 միջակ և փոքր գիրքով գրքեր՝ մեծաւ մասամբ՝ թարգմանական: «Մեծաւ մասամբ» ասելով, պէտք է հասկանալ, որ այդ 14 գրքերից միայն մէկը, այն է Պարոնեանի «Ազգային ջոջեր»-ն է ինքնուրոյն: Սակայն «ընկերութեան վարչութիւնը—կարդում ենք այդ տեղեկագրի մէջ—դեռ ևս անցեալ տարուանից մտադիր լինելով մի շարք շքեղ պատկերներով մանկական գրքեր հրատարակել, բանակցութիւններ սկսեց Գերմանիայի Շտուտգարդ քաղաքի Լէօվէ փիրմայի հետ, որի պատրաստած պատկերները ընդունելի է համարուած եւրոպական մանկական պատկերազարդ գրքերի համար: Վարչութիւնը հաղորդում է, որ իւր «բանակցութիւնները յաջող ելք ունեցան». այսինքն Լէօվէի փիրման նախաձեռնողը լինելով անօգնական ազգիս հայոց լուսաւորութեան, բարեհաճեց ուղարկել ընկերութեանը 70,000 պատկերներ, ստանալով ընկերութիւնից 1214 ռուբլի, իսկ մաքսատունն էլ ստացաւ 320 ռուբլի: Ընկերութիւնը այդ «յաջող բանակցութիւններից» յետոյ 1534 ռուբլիով շատ էժան ձեռք բերած պատկերներից մի մասը արդէն յարմարացրել է երեք մանկական գրքերի և սպառնում է մնացեալն էլ միւս տարի յարմարեցնել ուրիշ հէքիաթների... Ընկերութեան դրամարկղը հետևեալն է ըստ տեղեկագրի. 1866 թուին մուտք է եղել 5730 ռ. 58 կոպ. (չհաշուելով 1895 թուի մնացորդը 2127 ռ. 32 կոպ.), իսկ ծախք եղել է—6684 ռուբլի 76 կոպէկ:

Այդ տեղեկագրի մասին առիթ կ'ունենանք խօսելու ընկերութեան անդամների ընդհանուր ժողովից յետոյ:

* * *

Եկեղեցիների բարեզարդութեան և քահանաների վիճակի ապահովութեան խնդիրը միշտ և ամեն տեղ գրաւել են հայ ժողովրդի ուշադրութիւնը և նրանց հոգացողութեան առարկաներ են եղած: Հայ մամուլը ևս բաւական զբաղուել է այդ խնդիրներով: Ահա այսօր ևս այդպիսի խնդիր դրած է Թիֆլիզի Մողնու եկեղեցւոյ ծխականների առաջ: Սրբազան առաջնորդի կարգադրութեամբ այսօր, ամսոյս 23-ին, Մողնու ծխականները հրաւիրուած են ժողովի, որպէս զի որոշեն, թէ արդեօք նոյն եկեղեցու համար հարկաւո՞ր է ընտրել հինգերորդ քահանայ, թէ կարելի կլինի բաւականանալ չորս քահանաներով, որոնք այժմ կան: Պէտք է նկատել, որ Մողնու եկեղեցում միշտ չորս քահանայ է եղել և հինգերորդն էլ համարուել է Կուսանաց անապատի քահանան: Այս թիւն արդէն կայ լրիւ:

Խնդիրը սկզբունքի խնդիր է: Մենք չենք կասկածում, որ Մողնու ծխականները կըմբռնեն խնդրին, հեռու ամեն մասնաւոր հաշիւներից, լոկ եկեղեցու և նրանց միաբան քահանաների նիւթական ապահովութիւնն աչքի առաջ ունենալով: Վաղուց է արդէն որ Թիֆլիզի հայ ժողովրդի մէջ քահանաների ապահովութեան խնդիրը արծարծուած է և մինչև անգամ դրա համար առանձին գանձարանի հիմն դրած: Բայց շատ և շատ տասնեակ տարիներ կանցնեն, գուցէ և աւելի ևս, մինչև այդ գանձարանն իրօք կարող լինի Թիֆլիզի քահանաներին ապահովել որոշ ռոճիկով: Իսկ մինչև այդ երջանիկ ժամանակը ամենից յարմար միջոց համարուած է, որքան հնար է, իւրաքանչիւր եկեղեցու միաբան քահանաների թիւը նուազեցնել, որպէս զի գէթ փոքրաթիւ միաբանները միջակ ապրուստ ունենալ կարողանան: Ցանկալի է, որ Մողնու ծխականներն էլ այսօր նոյն այս սկզբունքով ղեկավարուեն իրանց որոշման մէջ, մանաւանդ որ իսկապէս ոչ թէ հինգերորդ քահանայի կարիք կայ, այլ նոյն իսկ քահանաների չորս թիւը մեծ պէտք է համարել:

* * *

Խօլերայից մի անգամ վախեցած ժողովուրդը այժմ աւելի է վախենում ժանտախտի վտանգից: Դրան ապացոյց է այն, որ Բագուի բազմաթիւ գործաւորները միայն անտեղի սարսափից դրդուած փախչում են իրանց գործից: Դրան նպաստում էին մանաւանդ բերնէ բերան պտտող, ոչ մի փաստի վրայ չհիմնուած լուրերը, իբր թէ Բուխարայում ժանտախտ կայ. սակայն այդ լուրերն այժմ պաշտօնապէս հերքվում են: Դեռ մի ամիս սրանից առաջ Տաշկէնտում զեկուցումն էր ստացուել Ամուդարիայի սահմանապահ զօրքի հրամանատարից, թէ մի աստիճանաւորի զեկուցման նայելով Բուխարայի խանութեան ժողովրդի մէջ մի տեսակ հիւանդութիւն է երևացել, որ վէրքեր է պատճառում և սպանում հիւանդներին: «Տուրկ. Վեդ.»-ին հաղորդում է այդ առթիւ, թէ հրամայուեց իսկոյն բժիշկներ ուղարկել Բուխարայի խանութիւնը այդ հիւանդութիւնն ուսումնասիրելու համար: Բժիշկները մանրամասն քննութիւնից յետոյ եկան այն եզրակացութեան, որ այդ հիւանդութիւնը մալերիայի հետևանք է և ոչ մի առնչութիւն չունի ժանտախտի հետ:

* * *

«Կավկազ» լրագրին հաղորդում են թէ Կիևի համալսարանի վրացի ուսանողները մի գրական շրջան են կազմել, որի նպատակն է վրաց գրականութեան ընտիր երկերը և վրաց նշանաւոր հեղինակների կենսագրութիւնները հրատարակել ռուս լեզուով: Ի սրտէ ուրախ ենք վրացի երիտասարդ ուսանողների այդ բարի ձեռնարկութեան:

* * *

Հիւսիսային Կովկասի խաղողի այգեստանները այս տարի երկիւղի մէջ են հեղեղներից: «Նովոստի»-ին գրում են, թէ այս տարի ևս Կուբանի շրջանում հեղեղի երկիւղ կայ, որովհետև երեք տարի շարունակ Կուբանի վարարելու դէմ ազգաբնակութիւնը չէ կարողանում մրցել, իսկ դրսից և կառավարութեան կողմից ոչ մի օգնութիւն չէ լինում:

* * *

Մի ումն Թիֆլիզեցի Ալադաթեան խնդիր է ներկայացրել քաղաքային վարչութեան, որով յայտնում է, թէ ամսոյս 22-ից Հաւլաբարի և Նաւթլուղի մէջ կըսկսեն երթևեկել նոր հնարուած և Եւրոպայի շատ քաղաքներում արդէն ընդունուած ինքնաշարժ կառքեր: Նոյն տեսակ կառքեր, ինչպէս յայտնում է Ալադաթեանը, պիտի երթևեկեն նաև Թիֆլիզի և Թելաւի միջև: Այդ կառքե-

ՖԵԼԻԵՏՕՆ

ՔԻՒՐԴԵՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐՀԵՍՏԸ

(Շարունակութիւն *)

Երբ մեր ուշադրութիւնը յուսահատաբար կըդարձնենք պատմական և գրական աշխարհներէն, ուր քիւրդին ոչ մի բաժին չենք գտներ, բնականաբար բաւական կասկածով կանցնինք երրորդ աշխարհը, յորում մարդս դարերով զբաղեցուցած է իւր հանճարը, ստեղծելով այդտեղ իւր հոգւոյն խորերու մէջ թագուած վեհ գաղափարներու պատկերները, մարմնացնելով իւր էութեան շքեղ փառքերը, մրցելով մօտենալ իւր արարչին ստեղծագործութեան բարձր գործին մէջ, և լեցնելով իւր մարմնոյ, մտքի և հոգւո՛յ կարօտութիւնները, իւր իսկ աշխատութեամբ: Արդեօք քանի՜ քանի՜ գրիչներ, այն օրից ի վեր, երբ մարդը մտածեց, թէ «ես պէտք է ինձ օգնեմ» զբաղուեր են մտաւոր աշխարհի մէջ, մինչև այն օր, երբ ծնաւ Հոմերը, Դեմոսթենէսը, Մոլիէրը, Վիրգիլը, Վէտաներու հեղինակները, Սոկրատը և Պղատոնը, և քանի՜ք այն օրից ի վեր մինչև այսօր գործածեր են իրենց գրիչը և մելանը, անմարմին իրականութեանց, հզօր օրէնքներու անանսանելի զօրութեանց և գաղափարներու լուսաբանութեան, բացադրութեան և դասաւորութեան համար, որպէսզի միտքը ընդլայնի, երևակայութիւնը ընդարձակի, դատողութիւնը սրուի, զգացումները բարձրանան, սրբանան, գիտութիւնը ճոխանայ և մարդըս քայլ մ'ալ մօտենայ բուն իրականութեան, որպէսզի հասկնայ, թէ ինքը ինչ է, ո՛ւր է և դէպ ո՛ւր կըդնայ:

Երբ կըմտածենք, թէ այդ բարձրագոյն աշխարհի մէջ գործող միլիոններու մէջ մէ՛կ քիւրդ չէ եղեր և չկա՜յ... հակառակ խիստ նպաստաւոր պարագայից... Սակայն այդ է իրողութիւնը:

Բեթհէզդայի՝ այդ մշտայոյզ և բուժիչ աւազանին ճիշդ շրթանց քով հազարաւոր տարիներէ ի վեր անդամալոյծի պէս անշարժ պառկած կըկենայ: Մտաւոր աշխարհը իրեն համար իրականութիւն, գոյութիւն չունի: Իսկ երբ արհեստին և արուեստին կանցնինք՝ հոն ևս նա նոյնպէս ապիկար, սորուելու անընդունակ և ստեղծելու անկարող է: Գեղարուեստի մէջ քիւրդի բանաստեղծութեան և ձայնական երաժշտութեան վրայ արդէն խօսեցանք: Ասոնց հետ սերտ կապ ունին երաժշտական գործիները:

Քիւրդի միակ երաժշտական գործիքները են տհօլը (դաւուլ), զուռնան, դուդուկը և պլուլը (փող): Առաջին երկուքը, կարող եմ ասել, որ ծանօթ են բոլոր ընթերցողներուն, միայն թէ քիւրդի զուռնան աւելի խոշոր, բերանը աւելի լայն և ձայնը բարձր և մի քիչ տարբեր է: Պլուլը մեր հասարակ փողն է, իսկ դուդուկը կարծեմ Կովկասի թութակ կոչուածն է: Դուդուկը փողից փոքր է, վերի բերանը շեղակի կտրուած և բերնի մէջ ցած շրթունքի կողմ՝ փայտի մի առանձին կտոր է հաստատուած: Ահա ասոնք—փողը, դուդուկը, զուռնան և դաւուլը—են քիւրդի երաժշտական գործիքները: Ասոնց մէջ ամենէն գործածականներն են դաւուլն ու զուռնան: Հին ժամանակներ այս երկուքը կըգործածուէին նաև իբրև պատերազմի երաժշտական գործիներ՝ երբ քիւրդ աղաներ իրարու վրայ պատերազմելու կերթային: Այդ նպատակի համար դաւուլ և զուռնան մինչև ասկէ 40 տարի առաջ ալ կըգործածուէին: Այդ պարագային երբեմն զուռնաները արծաթէ կըշինուէին: Սակայն դաւուլի և զուռնայի բուն և ամենաընդհանուր գործը ուրիշ է: Անոնք գրեթէ անբաժան են հարսանեկան հանդէսներէն: Քիւրդը պէտք է վերջին ծայր աղքատ լինի, որ սեփական ինքզինքը զրկել գէթ մի դաւուլի և զուռնայի փառքից և հաճոյքից: Երբեք հարսանեւորներու թիւը և դասակարգը այնչափ նշանակութիւն չունի, որչափ դաւուլի և զուռնայի բացակայութիւնը: Առանց այս երկու գործիքներուն՝ հարսանիքը գրեթէ սուգի հաւասար է: Հարսնեւորները կարծես կամչնան և չեն ուզեր, որ տեսնուին թէ հարս բերած և թէ հարսի ետև գացած ժամանակ: Մեծ կամ հարուստ քիւրդերը երեք, չորս և երբեմն մինչև եօթը զուռնա և դաւուլ կըգործածեն հարսնիքի առթիւ: Այս երկու երաժշտական գործիքներով կերթան հարսը բերելու, այդ երկու գործիքներով փեսայի տուն մի քանի օր հարսնիք կանեն: Ընդհանրապէս ասոնց լրացուցիչն է պարը: Այս պարագային իսկ փողահարը (զուռնաչին) և թմբկահարը (դաւուլչին) մեծ մասը հայ են:

Երբեմն մի քանի քիւրդ գիւղի մէջ մէկ փողահար կամ թմբկահար չես կարող գտնել: Ուստի հարսնիքի առթիւ անոնք գիւղէ-գիւղ և մինչև իսկ գաւառէ գաւառ կերթան իրանց համար փողահար և թմբկահար ճարելու: Դուդուկը և փողը աւելի հովիւները կըգործածեն: Այնուամենայնիւ զարմանալի չէ, եթէ հարիւր քիւրդ հովուի մէջ միայն մէկը ասոնցմէ մին կամ միւսը գործածել գիտնայ: Նոյնպէս զարմանալի չէ երբ 20 տնից բաղկացած մի գիւղի մէջ միայն մէկ դուդուկ կամ փող լինի, իսկ երբեմն ալ երբեք չլինի: Ճամբորդն երբեմն կարող է դափը (դիւֆ) տեսնել քիւրդերու մէջ, ինչպէս և ջութակը (քէմանէ): Դափը կրօնական մի գործիք է և միայն դէրվիշները կըգործածեն մուրալու կամ կրօնական նպատակներու համար, օրինակ աղօթքի միջոցին: Սրանք կըսորվեն դափի գործածութիւնը այն հեռաւո՜ր կրօնական վայրերու մէջ, ուր կերթան դէրվիշութիւն ընդունելու: Իսկ ջութակը կըգործածեն քիւրդերու մէջ շրջող գնչուները: Սրանք կուտան քիւրդին մաղ, մախաթ, ասեղ և օրօրոց: Սրանք թէ երաժշտութեան և թէ արհեստի մէջ քիւրդից բարձր են: Երաժշտական գործիքները գործածողները, ինչպէս և այդ արուեստը՝ քիւրդերու մէջ ստոր կըհամարուին: Ընդհանրապէս այն համարում ունին այդ դասակարգի և այդ գեղարուեստի վրայ՝ ինչ համարում, որ մարդիկ ունին գնչուներու վրայ: Հէքեաթ ասողը կամ պարզ երգ ասողը աւելի պատուաւոր կըհամարուի, իսկ պարին ամենէն պատուաւոր, այնպէս որ ամենամեծ աղան իսկ կարող է մասնակցել պարի՝ առանց երբեք իւր համարումը կոտրելու: Փողը և դուդուկը աւելի պատուաւոր են քան դաւուլն և զուռնան, այն է՝ մարդոց համար առաջին երկուքը գործածելը նուազ ամօթ է՝ թէև վերջին երկուքը անհրաժեշտ են հարսնիքի առթիւ, և յոյժ պատուաբեր հարսի, փեսայի և բարեկամաց համար: Կարծեմ պատճառը այն է, որ դաւուլչիութիւն և զուռնաչիութիւն լոկ արհեստ են և միջոց դրամ ձեռք բերելու, իսկ միւսները զբօսանք: Առաջինների գործածութիւնը ցոյց կուտայ, թէ զայնս գործածող քիւրդը չէ կարող աւելի բարձր և վեհ միջոցներով՝ օրինակ արտերով, ոչխարներով, աւազակութեամբ և գողութեամբ իւր ապրուստը ճարել և ուստի մուրալի (գնչուի) ստոր արհեստին է դիմեր:

Այժմ անցնենք ուրիշ արհեստներու.—ճարտարապետութիւն, քանդակագործութիւն, նկարչութիւն, հիւսնութիւն, երկաթագործութիւն, ոսկերչութիւն և տարազագործութիւն հայլն: Այս, ազգերու պարծանք բերող, աշխարհ օրհնող, երկիրը ծաղկեցնող, մարդուս դժուարութիւնները պակսեցնող և պէտքերը հոգացող «ուեթիւններու» մէջէն պէտք է բացարձակապէս դուրս հանենք՝ նախ նկարչութիւնը և քանդակագործութիւնը, եթէ Սղերդի արաբախօս բնակիչները՝ որոնք դաշոյնների վրայ ծաղիկներ կը գծեն՝ քիւրդ չեն: Ովկիանոսի կղզեաց մարդակերները, Աֆրիկէի վայրենիները և բուշմանները իսկ այսչափ՝ ստոր չեն: Քարի դարուն մէջ իսկ, Քրիստոսէն հազարաւոր տարիներ առաջ, Աբրահամէն իսկ շատ առաջ շինուած են արձաններ և քարի վրայ քանդակուած են պատկերներ: Բայց թէ արդեօք երբեք քիւրդը անցեալին մէջ քանդակագործի գրիչն իւր ձեռն առած է՝ ոչ մի ապացոյց չկայ այդ մասին անցեալոյն վերաբերմամբ, իսկ ներկային մէջ այդ բարձր գործով պարապող քիւրդ չկայ: Քիւրդերու միակ տարազագործութիւն և ջուլհակագործութիւնն է քեզախիկ, կարպետ, վրան, մախաղ, քուրձ շինել, ասոր վրայ աւելցուր սանապան, թռնոց, գուլպայ, հովիւի աղաման և չուան շինելը և ահա նորա աշխատութեան սահմանը կըվերջանայ, նրա ուղեղի ալիքները կըհանդիպեն անանցանելի պատուարին՝ «ասկէ անդէն չանցնես» անողոք հրամանին: Սակայն այդ ալ միայն քիւրդ կիներու գործն է, որոնք գիտեն նաև բուրդ մանել և մի քանի պարզ ներկեր հանել՝ որոնք անհրաժեշտ են այդ պարզ տարազագործութեան և ջուլհակագործութեան: Իսկ այր մարդը յամենայնի և բացարձակապէս հեռու է այդ արհեստներէն և անոնց վրայ մի աղօտ գաղափար իսկ ունենալէն:

Դոքա «կնիկի» գործեր են: «Մարդու համար անոնցմով պարապել կնիկ ըլլալ է» և ուստի չափազանց ամօթ: Մի անգամ շատ հեգնանքով և շատ ծիծաղով կարդացուեցաւ մի եւրոպացի գրողի այն խօսքը, թէ Դիարպէքիրի կողմեր քիւրդերը ի միջի այլոց կըպարապին տարազագործութեամբ, թէ անոնց շինած շալվարները նկարէն են և բաւական գեղեցիկ: Մինչև իսկ եղաւ հետևեալ դիտողութիւնը,—եթէ եւրոպացիք այսպէս կըգիտեն և այսչափ կարող են իրականը ներկայացնել՝ կարծեմ մեծ կասկածով և անվստահութեամբ կարդալու ենք անոնց ուրիշ երկրներու վրայ տուած տեղեկութիւնները: Մի ուրիշը ասաց, թէ եւրոպացի մը չէ՞ր, որ հրատարակեց թէ Խարբերդի կողմեր թութի վրայ նախ կըթքնեն և ապա կուտեն, մինչդեռ խարբերդցիք թութը գետնէն վերցուցած միջոցին վրան՝ ոչ թէ կըթքնեն, այլ կըփչեն, որ փոշի չմնայ վրան:

Ինչևիցէ: Ճշմարտութիւնը այն է, որ Դիարպէքիրի կողմերի տարազագործները, ոչ թէ քիւրդ, այլ քիւրդերէն խօսող հայեր են:

Հիւսնութեան համար միայն այսչափ ասեմ, որ արօր և գութան շինողը հայն է, աթոռ շինողը, եթէ երբեք պէտք լինի, հայն է:

Քիւրդի ձմեռուան անհրաժեշտ մի բանն է քիւրսին, (սեղանի նման փայտեայ մի կազմած), որ թոնիրի վրայ կըդնէ, կարպետ կըձգէ վրան, և իւրայնոց հետ մէկտեղ անոր շուրջը կընստի և անոր 4 ոտներու մէջտեղերէն իւր ոտները կըկախէ տաքնալու: Այդ շատ պարզ և անհեթեթ մի կահ է, բայց շատ կարևոր և անհրաժեշտ: Երբեք տեսած և լսած չեմ, որ քիւրդ մը այս քիւրսին ինքը շինէ կամ նորոգէ:

Պիտի տեսնես աշնան, որ կոտրած քիւրսին կամ փայտի մի քանի կտորներ քիւրդը իւր եզան կամ ձիու վրայ դրած մէկ գիւղէ մի ուրիշ գիւղ կըտանի մի հայու նորոգել տալու, կամ կըտեսնես ձմեռը, որ ձիւներու մէջէն երկայն ճամբայ կտրելով, մախաղի մէջ երբեմն մի քիչ ընկոյզ լեցուցած, կըթափի մի ուրիշ գիւղ իւր ծանօթ հայու տուն և կըպատմէ իւր դժբաղդութիւնը—«Տղաներ խաղցած միջոցին քիւրսիի վրայ ելան, մէկ ոտքը կոտրեցին կամ վերցուցած միջոցին՝ մի ուրիշ բանի դպաւ և նրա մի քանի տախտակները վնասուեցան: Այժմ բոլորովին չուարած մնացեր ենք. տղաները շատ կըմրսեն, երբ հիւր կուգայ տուն շատ կամչնանք, որ քիւրսի չկայ թոնրույ վրայ»: Ուստի հայն առնելով իւր սղոցը և ուրագը կերթայ այդ «արևելեան հարցը» լուծելու:

Գէթ այս է ճշմարտութիւնը բոլոր այն տեղերի մասին, ուր որ հայեր կամ ուրիշ քրիստոնեաներ երբեք կըգտնուեն և կամ գիւղամատչելի են: Եւ չեմ կարծեր, թէ յամենայնի քրդաբնակ տեղերն այնչափ տարբեր է բանը:

Զէնք գործածողները քիւրդերն են, իսկ զէնքերը շինողը և նորոգողը, Սղերդը բացառելով՝ հայերն են, կամ ուրիշ ազգեր:

Օրինակ՝ Սբաղայի քիւրդեր, հայդաբանցիներ և կամ իրենց զէնքերը քաղաքներ նորոգելու կըտանեն և կամ այդ արհեստին տեղեակ հայեր հրաւիրելով՝ իրենց մէջ կըտանեն այդ նպատակի համար, նոյն է իրողութիւնը սանձի, դանակի, խոփի, մանգաղի և գերանդիի մասին: Ջիրանցին՝ ամենաքաջ և պատերազմիկ աշիրաթներից մէկն եղած է: Վանից մինչև Մուսուլ և Սղերդից մինչև Պարսկաստան միայն մէկ աշիրաթ (Ալի Ճաղէյի չակներ) նրանց կարող են հաւասարիլ՝ և այս կընդունեն բոլոր քիւրդերը՝ սակայն անոնց մէջ այսօր երբեք մէկ քիւրդ զինագործ կամ երկաթագործ, կամ դանակ իսկ շինող, սանձ նորոգող չկայ:

Սա կարող է գաղափար տալ ուրիշ աշիրաթների մասին: Երբ որմնադրութեան և ճարտարապետութեան գանք, կըտեսնենք, որ անոնք միայն այն միայարկ և տգեղ հիւղակները կարող են շինել, որ Տաճկա-Հայաստանի մէջ պըտտող ճանապարհորդը կարող է տեսնել:

Աղաներու տները, կամ բերդերը դարձեալ հայերու գործն են: Մի աւերակ, մի խորտակուած աշտարակ, պարիսպ, տաշուած քարով մի որևէ բան, գերեզման իսկ՝ (ներկայի կամ անցեալի վերաբերմամբ), տեսնել թէ քիւրդն է շիներ՝ դա Գաբրիէլ հրեշտակի համար իսկ անկարելի է:

Իսկ դարբին, կօշկակար և կամ ոսկերիչ քիւրդն դեռ ծնած չէ: Քիւրդի այս անկարողութիւնը և անընդունակութիւնը մինչև իսկ իւր մեռելի գերեզմանի պատրաստութեան և թաղման մէջ կըտեսնուի: Այնպէս որ հայերու մէջ, երբ ուզեն ցուցնել, թէ մէկը մի գործ լաւ կերպով չէ արած, այս առածը կը գործածեն «սկսա ինչ քիւրդը իւր մեռելը թաղի» (կարծես թէ քիւրդը իւր մեռել թաղող պէս է): Ուստի կարող ենք ասել, թէ քիւրդը պատմութիւն չունի, գրականութիւն չունի, արուեստ չունի, արհեստ չունի: Ապա ուրեմն ի՞նչ է քիւրդը, ո՞ւր է քիւրդը և ինչո՞վ կապրի քիւրդը:

(Կըշարունակուի)

---

*) Տես «Արձագանք» № 33.

բով Հալաբալից մինչև Նաւթլուղ գնալն արժէ 10 կոպէկ։

⁂

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, 17 մարտ,

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Ամսոյս 16 ին, կիւրակէ երեկոյեան ժամերգութենէն ետք, Ն. Ս. Օծութիւն Վեհափառ Հայրապետը գնաց կանգնեցաւ Իջման տեղի սեղանի ետևը, բարձրաւանդակի մը վրայ։ Չուրջը բոլորեցան միաբան եպիսկոպոսները, վարդապետները, ճեմարանի սանուները։ Վարը, տաճարի ընդունարանին մէջ՝ խուռն բազմութիւնը ժողովրդեան, իրարու վըրա յենած, բուռն հետաքրքրութեամբ՝ լսելիքնին սրած կսպասէին անհամբերութեամբ Վեհ. Հայրապետի քարոզը լսելու, հոգեպէս մխիթարուելու։

Սկսեց, երեսը խաչակնքելով, աւանդ նախաբանի, ողորմութեան վրայ։

Կըխօսէր նա, ինչպէս միշտ՝ անբռնազբօսիկ, պարզ, բնական, իմաստալի, ժողովրդի սրտին խօսող, հոգւոյն թափանցող, ցաւէն հասկցող՝ ամենուն հաւասար «Հայրիկի» սեպհական ոճովը։

Վեղարին միջէն կ՚երևար իւր յոգնավաստակ կնճիռներով գծգծուած ճակատը, դալուկ դէմքը, գորովագեղ, թախծոտ աչքերը՝ մերթնում նայուածքներով։ Յաճախ կընստէր նա, աթոռի վրայ յոգնելուն, խօսած ատեն, որ երբեք չէր ընդհատեր։

Ըսինք, որ քարոզն սկսեց՝ ողորմութեան վրայ խօսելով։ Ողորմածաւէր ըլլալ, ողորմիլ միշտ անկեալին, կարօտին, թշուառին, ահա մեր անցաւոր, ունայն, թասալուն կեանքի միակ մնայուն, սեպհական՝ անգին գանձը, անկողոպտելի հարստութիւնը, որ կընանք պարծանօք, հեշտութեամբ կրել հետերնիս մինչև հոն, ուր վերջ ի վերջոյ կըյանգինք, ուր ճշմարիտ յաւիտենական կեանքը կըսկսի։

Ժողովրդական մէկ երկու սրամիտ առածներէ, դիւրըմբռնելի օրինակներէ զատ, Աւետարանէն ներկայացուց ամենաթշուառ, վիրալից մարմնով աղքատ Ղազարոսը, անողորմ մեծատունը։ Առաջինը կըկնքէր մահկանացուն՝ տառապալից զրկանքներով, հեծութեամբ, ցաւատանջութիւններով, վերջինը՝ փարթամ, ուրախ, հանգստաւէտ։ Պատկերը կըփոխուի Ղազարոս կ՚երևայ յաւիտենական հանգստարանին բարձրերը, Աբրահամու գոգը, երջանիկ մեծատունը՝ խոր, տանջանքի անդունդները՝ չմարող կրակներու մէջ հոգեւանջ կըգալարի։ Սա՝ իւր տան դրանը առջև գետինը քաշքշուող, իւր ճոխ սեղանէն ինկած անշահ փշրանքներովը կերակրուող աղքատ խոցոտ Ղազարոսին վրայ կը սևեռէ աչքերը, ի զուր կոկոզագին աղերսելով Իսրայէլի նահապետին, որ անոր մատին ծայրովը գէթ պուտ մը ջուր կաթեցնել տայ իր հրաշաշոր, պապակէն խորովուող լեզուին վրայ։

Մօտ մէկ կէս ժամ տևեց քարոզը։ Ու աւարտեց՝ հոգւոյն խորէն ելած անդուսպ, դառնագին հառանչանքով մը, իւր սիրելի ժողովրդի տառապանքին կացութիւնը, անոր մօտալուտ փրկութեան... Դէպ Արարիչն ունեցած մեծ յոյսը, հաւատքը յիշելով, ի վերջոյ իր բախտակել, օրհնելով ամենքը։

—

Հայ գաղթականները կապոյտ քաշող հղթան՝ դեռ չեղեցաւ, կուգան անոնք միշտ, ամեն օր, ու քիչ շատ մխիթարուած կըմեկնին—մնայուններ ալ կան—ասկէց աւելի հեռուն քաղաքները, գիւղեր, երբեմն ադամամերկութիւններն հազիւհազ սքօղող ցնցոտիներու մէջ պլլուած, ամեն հասակէ, սեռէ։ «Թափառական են, «Հերըվդիաաա»-ին պէս՝ ձեռքերնին մէկ մէկ ցուպ, քամակնին կոր, դողդողուն մաշած մարմիններով, ու ժղակ օդէն խարազանահար դէմքերնուն վրայ անջնջելի խոր սրտմութեան, սուգի ուրուագէպ դրոշմը...

Ե՞րբ պիտի կասի հայրենի երկիրը լքող, ամայութեան դատապարտող այս ալիքը, մահուչափ ծանր, միևնոյն ժամանակ պարտաւորիչ դարձած գաղթականութիւնը, քանի որ հոն՝ հուր ու սուր, մահ կըսպառնայ ամեն վայրկեան... յայտնի չէ։ Ոչինչ գիտենք։ Հա գարունն ալ կուգայ, կանչենք՝ կըլսէ, եկա՛ւ, չամչնալու համար՝ երեսը քօղ ձգած...։ Ինչ պիտի ըլլան այս ի բնէ աշխատութեան վարժուած բիւրաւոր թշուառ տարագիրները, որոնք արդէն ձմրան կարճ օրերու անգործութենէն փտտած են, մանաւանդ գարնան երկար, յետոյ ամառն աւելի երկար օրերուն, եթէ շուտով, ինչպէս կըսեն, հայի քաղաքական հորիզոնը չպարզուի, մոլեռանդ տաճկի դժոխային գազանութեանց սանձ չդրուի, հապա ապա օդին մէջ, քամին քմահաճոյքներուն մատնուած ծփծփուն, խաբուսիկ ռէֆօրմներուն գործադրումը չըլլայ։

Պատասխանը բնորոշ չէ։

Ս. Մ. Ծոցիկեանց։

⁂

ՈՉ ՄԻ ԳՐԱԳԷՏ

—

«Ով կարող էր կարծել—ասում է «Լույս» լրագիրը, թէ նոյն իսկ զէմստւոների շրջաններում կարող են ահագին ընդարձակ այնպիսի գիւղեր լինել, որոնց մէջ ոչ մի գրագէտ չկայ։ Բայց ընդհանուր աշխարհագրի մարդահամարը կազմողները վկայում են որ Օրլովսկի նահանգում այդպիսի մի քանի գիւղեր կան։

—Կարդալ գիտես, հարցնում է ազգահամարողը գիւղացուն։

—Կարդա՛լ ես ասում, օ, պարօն, մենք ինչ ենք որ կարդալ իմանանք։

—Իսկ ձեր երեխաներից մէկը չկա՞յ որ գրագէտ լինի։

—Ոչ, ոչ, ասում եմ ձեզ, սիրելի՛ս, ոչ ոք չգիտէ, այպէս էլ գրիր ինչպէս ասում եմ—թէ ամենքն անգրագէտ են։ Այստեղ ահա թէ ինչպիսի գիւղ է, աղաս, երբ նամակ ենք ստանում մեր ազգական զինուորներից, կարդացող չի լինում և պիտի հինգ վերստ ճանապարհ գնանք հարևան գիւղը, որ կարդացող գտնենք։

—Ինչո՞ւ չէք գոնէ ձեր որդոց կարդալ սովորեցնում։

—Ո՞րտեղ սովորեցնենք, մօտեղեց է ուսումնարան։ Հինգ վերստ հեռու մի գիւղում մի ուսումնարան կայ, այն էլ լիքն է։

Ազգահամարողն աւելացնում է, թէ այդ պատասխանները նա լսում է բազմաթիւ գիւղերում, ուր երեխաները պակաս չեն։

⁂

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԽՆԴԻՐ ԲԱԳՈՒԻ ՀԱՄԱՐ

—

Բագուն մի տարօրինակ քաղաք է և ամեն ինչ նրա մէջ տարօրինակ կերպով է կատարվում՝ ոչ նման ուրիշ քաղաքների։ Եթէ մի հասարակական գործ է պատահում, կամ բոլորովին մեռելութեան հասցրած անտարբերութիւն են ցոյց տալիս, կամ ընդհակառակը, երբ մասնակցում են, էլ չափ և սահման չեն ճանաչում, տենդային արագութեամբ ձեռնամուխ են լինում և այն, ինչ որ ուրիշ տեղ տարիների, այն էլ տասնեակ տարիների ընթացքում կարելի է կատարել, այստեղ կատարվում է մի քանի օրուայ մէջ։ Օրինակ ձեզ հէնց Բագուի Թեմ. դպրոցի հարցը—երկար տարիներ յարուցած էր այդ խնդիրը, խօսում էին, վիճում էին, գրում, ջնջում, բայց բագուեցին լուռ էր, անտարբերութեամբ լսում էր, կարծես մտքով անգամ չէր անցկացնում այդ խնդիրը, բայց յանկարծ նա քնից զարթնեց, սթափուեց և մի երկու շաբաթում դպրոցի ապահովութեան համար հաւաքուեց 300,000 ռուբլի։ Այն էլ ինչպէ՞ս հաւաքուեց, շտապ, շտապ, կրակուած, տենդային դրութեան հասցրած եռանդով։ Որտեղ է տեսնուած որ մի քաղաք, նոյն իսկ ամենամեծ քաղաք, մի ուսումնական հաստատութեան համար մի այդպիսի կարճ ժամանակամիջոցում տայ մի այդպիսի ահագին գումար։ Բայց Բագուն տարօրինակ է նա կամ գործում է կամ չէ գործում։ Ինչպէս Բագուի առևտրական գործերը կամ մի անգամից տիրոջը յանկարծ հարստացնում երկինք են բարձրացնում, կամ մի անգամից անսպասելի կերպով իջեցնում, հողին հաւասարեցնում։ Ճիշտ նրանց ֆօնտաններին նման են Բագուեցիները։ Բագուեցուն իւր մեռելային անտարբերութիւնից դէպի տենդային գործունէութիւն հրաւիրելու համար հարկաւոր է զօրեղ շարժառիթ, ցնցող, ըսթափեցնող խթան, ինչպէս ապագայ ֆօնտանի զօրեղ և առատ հոսանքը նըրան մղում է դնել իւր ամբողջ կարողութիւնը, որդոց ապահովութիւնը, իւր ապագան—նոր փորելու վրայ—զօրեղ ֆօնտան ստանալու համար,—այնպէս էլ դէպի հասարակական գործ մղելու համար հարկաւոր են զօրեղ-ցնցող, սթափեցնող արտաքին զօրեղ շարժառիթներ. . . :

Ճշմարիտ որ տարօրինակ քաղաք է Բագուն, օրինակ վերցնենք և Բագուայ քահանայական խնդիրը, դարձեալ տարօրինակութիւն կըտեսնենք, որ ոչ մի ուրիշ քաղաքում կամ գիւղում չէք գըտնիլ։

Ամեն տեղ, եկեղեցու դարերի ընթացքում սրբագործած օրէնք է՝ որ ծուխն ինքն իւր միջից մէկին ճանաչելով և հաւանելով, քահանայ է ընտրում և այդ քահանան մինչև մահը հովւում է իւր հօտը, այն հօտը որ իրան սիրել է և որին ինքն ևս սիրում է — ուրախութեանը ուրախակից և տրտմութեանը տրտմակից լինելով։ Բագւում դրա հակառակն է. քահանան հովւում է այն հօտը, որ իրան չէ ճանաչել և չէ ընտրել, քահանան գնում այն տունը կարգ կատարելու և ուրախակից լինելու, որտեղ իրան ատում են և ճարահատեալ են ընդունում, և քահանան այն ընտանիքը չէ յաճախում որը իրան ընտրել է, որովհետև այդ ընտանիքը այժմ ծուխ է մի այլ քահանայի։ Կըհարցնէք ինչու է այդպէս, այդ անկարելի է, այո՛, անկարելի է ուրիշ տեղերի համար, բայց Բագուի համար կարելի է, որովհետև Բագուն տարօրինակ քաղաք է։

Քահանայական խնդիրը այժմ հոգևոր իշխանութեան և բագուեցիների ըզբաղեցնող յուզող խնդիրներից մէկն է և արժէ ծանօթանալ նրա ծագման և զանազան շրջանների հետ, որ կ՚աշխատենք ստորև բերել, որքան կարող ենք։

Բոլորին յայտնի է, որ Բագուն մի երկու տասնեակ տարի առաջ մի աննըշան տեղ է եղել, նոյն իսկ ծառայել է որպէս աքսորատեղի, այնպէս որ տեղական հայ բնակիչների թիւը շատ փոքր է լինում։

Բայց յանկարծ յայտնւում է Նաւթը, այդ գործով պարապողները յանկարծակի հարստանում, ահագին կարողութեան տէր դառնում. այս հանգամանքը որպէս մի մագնիս դէպի իրան է քաշում մօտակայ գաւառների հայ բնակիչներին, որոնից մի մասը հողի պակասութեան և աղքատութեան պատճառով թողնում է իւր գութանն ու մաճը և դիմում Բագու, մի մասն էլ—շուտ հարստանալու տենչով վարակուած,—թողնում է իւր գիւղական խաղաղ և ապահով կեանքը և դիմում Բագու։ Եկողները մեծ մասամբ լինում են Ղարաբաղի, Շամախու, և Գեօքչայի գաւառներից և գալիս են ժամանակաւոր կերպով, որ շուտ հարստանան և վերադառնան, բայց շատերին չէ յաջողվում ֆօնտաններ ունենալ, այլ նրանց վիճակուած է լինում աւելի ցաւալի դրութիւն՝ Բալախանում և Սև քաղաքում բանւորի դառն, չարքաշ և մաշող կեանքը վայելել։ Իսկ որոնց յաջողվում է շուտ հարստանալ, փոխում են իրանց կեանքի ընթացքը, մոռանում հին հայրենիքը, իրանց աւելի լաւ զգալով ֆօնտանների աշխարհում։ Այսպիսով ամեն կողմից եկած հայերը չեն վերադառնում, այլ մնում են Բագվում։ Բայց քանի որ գալու ժամանակ նրանք մտադիր էին շուտ վերադառնալ հայրենիք, այդ պատճառով հետները ոչ ընտանիք են բերում և ոչ էլ ծխատէր քահանայ, բայց մնալով Բագու և հաստատ տեղափոխելով իրանց ընտանիքները, կարիք են զգում քահանայի, հետները բերած քահանայ չեն ունենում։ Եկողները թէև բոլորը միասին բաւական շատ են լինում, բայց ոչ մի գաւառից, այլ զանազան տեղերից, այն էլ ոչ մէկ անգամից եկած, այլ տարէց տարի և մաս-մաս, այնպէս որ իւրաքանչիւր գաւառից եկածները այնքան քիչ են լինում և ցրուած, որ մի առանձին քահանայ հրաւիրել և ապա հովել չէին կարող։ Միւս կողմից՝ զանազան գաւառներից եկածների մէջ չէ լինում մօտիկ յարաբերութիւն, ներքին կապ, որ միանան և ընդհանուր ուժով քահանայ ընտրեն, ընդհակառակը Շամախեցիները խորշում և ծաղրում են Ղարաբաղցիներին և վերջինները էլ յետ չեն մնում նոյն գործում շամախեցիների վերաբերմամբ։ Դրանց մէջ տիրում է մի խուլ մրցումն, խորշումն, ատելութիւն, որ մինչև հիմա իսկ, երբ քիչ թէ շատ չփուել—քաղաքակրթուել են, այդ խըրթութիւնը, միմեանց ծաղրելու սովորութիւնը, ոչ թէ չէ թուլացել, այլ աւելի ևս զօրացել է, այնպէս որ թէ սկզբներում և թէ նոյն իսկ այժմ երբեք չեն կարողանում միանալ և ընդհանուր ուժերով գործ կատարել։ Այսպէս իւրաքանչիւր մի գաւառից եկողները առանձին առանձին անկարող լինելով յատուկ իրանց համար քահանայ հրաւիրել, և անտեղի ծագած ատելութեան, խորշութեան և ծաղրի պատճառով անկարող են լինում միանալ եկեղեցիներ շինել—ժողովուրդը ծուխերի. բաժանել։ Ժողովուրդ լինում է, բայց ծուխերի չէ բաժանած լինում—և ոչ էլ ժողովրդի թուի համեմատ եկեղեցիներ են լինում, չեն լինում և քահանաներ, որովհետև ժողովականները չեն միանում համախօսականներ կազմելու և քահանաներ ընտրելու։ Այս խառնակ դրութիւնից օգուտ են քաղում քահանայ լինել ցանկացող անձինք և մի մի թուղթ առած շրջում են և տըներում, մագազիններում և կանտօրներում ստորագրութիւններ հաւաքում։

Ինչպէս ընդունուած է, այսպիսի հանգամանքներում դիմում են, ի հարկէ, հարուստ ազդեցիկներին, որոնց մէկի համախօսականին այսօր են ստորագրում, վաղն էլ մի ուրիշինն և երրորդ անգամ էլ—երրորդի թերթին։ Քահանայացուները հարուստներից ստորագրութիւն կորզելով բաւականանում են էլ նեղութիւն չքաշելով դիմելու ստորին-միջին դասակարգերին։ Սրբազան թեմական առաջնորդներն էլ բաւական համոզեցուցիչ են համարում աղաների ստորագրութիւնը, սրան և նրան քահանայութեան կոչում տալու համար, էլ նեղութիւն չքաշելով հարցնել, որ համարեա միևնոյն հարուստ աղաները բոլոր քահանայացուների համախօսականին ստորագրել են, իսկ ուրիշ հազարաւոր բնակիչները և ոչ մէկին. Այսպիսով մի երկու հարիւր հարուստների ստորագրութեամբ—մի քանի տարուայ մէջ յայտնւում են մէկը միւսի հետևից—չորս—հինգ քահանայ, որոնք հովւում են ոչ թէ միայն իրանց համախօսականին ստորագրողներին, այլ այն հազարաւորներին, որոնք ոչ ճանաչել, ոչ ընտրել և ոչ էլ կուզէին իրանց վրայ քահանայ տեսնել, բայց այսօր ստիպուած են նրան հայր ընդունել—խոստովանահայր, մխիթարիչ—վըշտակից—ուրախակից։ Տեսնում էք, դարձեալ տարօրինակութիւն, որ միմիայն Բագվում կըտեսնէք։

Ուրիշ քաղաքներում, որտեղ կան թաղական եկեղեցիներ և ժողովուրդը եկեղեցիների համեմատ ծուխերի է բաժանուած, ամեն մի ծուխ ունի իւր ծխական քահանայն, որ և հովւում է միմիայն իւր ծուխը։ Բագվում այդպէս չէ.—մի հատ եկեղեցի, բազմաթիւ ժողովուրդ, ծուխերի բաժանում չկայ և մի երկու հարիւր մարդու կամքով ընտրուած մի քանի քահանայ պիտի հովւեն ոչ միայն իրանց ընտրողներին, այլև մնացած հազարաւորներին, ով որտեղ պատահէր, պիտի կարգ կատարէր, որից ծագում է մի խառնակ և տարօրինակ դրութիւն։

Աւագ քահանայի կառավարութեան շրջան։ Աւագ քահանան, որպէս մեծ—ազդեցիկ և հարուստների հետ կապ ունեցող, բնական կերպով հանդիսանում է որպէս լիազօր կառավարիչ միւս քահանաներին։ Երբ մի ծխական տան կարգ է պատահում, նա դիմում է այն քահանային, որին ընտրել է, կամ եղածներից ամենից շատ յարգում է, բայց սա չէ կարող գնալ կարգ կատարելու առանց աւագ քհ. հրամանին։

Ծխականը ստիպուած է նախ գտնել աւագին, յայտնել իւր կարիքը, որից յետոյ կամ աւագ քահանան ինքն է գընում, կամ մէկ ուրիշ քահանայի վրայ տոմսակ է գրում, որ նա գնայ։ Եթէ աւագ քահանային դիմողը հարուստ է, լաւ կըվարձատրի, աւագն ինքն է գնում, իսկ եթէ դիմողը աղքատ է, այն ժամանակ ինքն չէ գնում, այլ միւս քահանաներին է ուղարկում. իսկ երբ պատահում է միաժամանակ մի քանի ընտանիքներում կարգ, դարձեալ պիտի բոլորն էլ դիմեն աւագին, որ անկարող լինելով միանգամից բոլոր տեղերն էլ գնալ, ստիպուած է ուրիշներին ևս ուղարկել և վարվում է այսպէս՝ նախ լաւ և շատ տեղն ինքն է գնում, իսկ մնացած լաւ տեղը ուղարկում է քահանաներից նրան, որին սիրում է և ով սըրան կուսակից է. իսկ երրորդ աղքատ և հեռաւոր տեղը ուղարկում է, պատժելու համար, իւր հակառակորդին (սա քահանաների պատմածն է)։ Կարգ կատարող քահանան ստացած վարձատրութիւնը պիտի գրէր դրա համար յատուկ պատրաստած մատեանի մէջ, որից յետոյ գումարելով, ստացածը բաժնում էին իրանց մէջ։ Այս առթիւ լինում են շատ բամբասանքներ. թէ քահանան աւել է ստացել, բայց մատեանում քիչ է գրել, մնացածը պարտակել է, կերել է։ Պատահել է, որ մէկը միւսի անունը պղծելու համար, ժողովականներից սրան կամ նրան սովորեցրել է, որ ասէ թէ կարգի համար շատ աւել է տուել ինքը, քան մատեանում քահանան նշանակել է։ Տեսէք, որքան տարօրինակութեանց և անկարգութեանց տեղիք է տալիս այսպիսի տիրապետող կարգը։ Նախ՝ ոտնակոխ է լինում եկեղեցու սրբագործած օրէնքը և ժողովրդի դարևոր իրաւունքը—որ ծուխն ինքը պիտի իւր համար քահանայ ընտրէ, որին ճանաչում է, յարգում է և որին կըկամենայ իրան խոստովանահայր և վշտակից ունենալ. իսկ այստեղ քահանան ընտրուել է հարուստների կամքով, բայց հովւում է և շատ շատերին, որոնք նրան չեն ճանաչել և գուցէ այժմ ևս ծանօթ չլինէին, եթէ ստիպուած նրան իբրև քահանայ չընդունէին։ Երկրորդ—մի ընտանիքում կարգ պատահած ժամանակ, տան տէրը դիմում է իւր ընտրած կամ յարգած քահանային, բայց սա չէ գնում. ծըխականը խնդրում է, պաղատում է, յայտնելով, որ ես քեզ եմ ընտրել, քեզ եմ ցանկանում տեսնել իմ օջախում. և վերջապէս կարիքը, պահանջը ստիպողական է, ժամանակ չկայ գընալ որոնել աւագին, որ յետոյ նա ուրիշին ուղարկէ, բայց ստիպուած է այդպէս անել, ուրիշ ճար չկայ։ Երրորդ.—Աւագ քահանան, ինչպէս և բամբասում էին, բնական կերպով իրան դիմող ծըխականների մէջ խտրութիւն է դնում. հարուստների և ազդեցիկների մօտ ինքն է գնում, պակասաւորների մօտ ուրիշներին ուղարկում, սրով միւս քահանաները զրկվում են կարգ կատարել և մուտք ունենալ այն հարուստ ընտանիքներում, որոնք սրա համախօսականին ևս ստորագրել են, այսպիսով քահանաների մէջ ծագում է վէճ, կռիւ, գանգատ և մըրցումն։ Չորրորդ—ընկեր քահանաները մէկ մէկու վարկ և անուն ձգելու համար՝ տեղի անտեղի սկսում են բամբասել-եկամուտները ճիշտ չարձանագրելու և աւելորդը տակով անելու մէջ։

Աւագ քահանայի կառավարութեան շրջանը բաւականին երկար ժամանակ է տիրում, երբ միւս քահանաները հանգուցեալ Մակար Կաթողիկոսի Բագւում եղած ժամանակը դիմում են, խնդրելով հերթապահութիւն նշանակել. այդպէս էլ լինում է։

Ա. Բալայեան։

(Կըշարունակուի։)

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

⁂ Ինչ հակասութիւններ ասէք չեն լինում մամուլի մէջ. բայց որ նոյն լրագրի սիւնակներից մէկում հայհոյուի մի գաղափար և միւսում փառաբանուի, այդ միայն կարելի է հանդիպել «Նով. Վրեմ.»-ի մէջ։

Ահա թէ ինչ անսպասելի տողեր ենք կարդում Յունաստանի, Թիւրքիայի և Եւրոպայի մասին։

«Ինչպէս և չլինի, փոքրիկ ազգը (Յունաստանը) շարունակում է յուզուել, հակառակել և մամուլը բորբոքում է նրա հայրենասիրութիւնը, նախագուշակելով նրան յաղթութիւն և մեծութիւն։ Եւ երեկուան կռիւը ի հարկէ այդ ազգին աւելի ևս կ՚ոգևորէ։ Իսկ նրանցից այդ ոգևորութիւնը ի հարկէ հաղորդվում է բօլղարներին, սերբերին, չերնոգորցիներին։ Բօլղարական լրագրները լի են ատելութեամբ դէպի Թիւրքիան, նրան խանձում են ատելութեամբ և ամենախիստ խօսքերը չեն խնայում սուլթանի համար. . .

Դուք զգում էք, որ այդ փոքր ազգերը պատրաստ են... և ինչպէս համոզել նրանց յանուն մարդկութեան, յանուն խաղաղութեան, երբ նրանց համար գործը վերաբերում է ազատութեան, ազգային զարգացման և երբ նրանց համար եւրոպական կոնցերտը մի տեսակ բռնութիւն է։ Ո՞վ կարող է նրանց համոզել թէ Թիւրքիան դեռ ուժեղ է, թէ նա դեռ զինուորական պետութիւն է և թէ փոքր պետութիւնները չեն կարող նրան յաղթահարել։

Այդ փոքր պետութիւններն ևս իրանց պատմութիւնն ունին և պատմութիւնը նրանց կողմն է։ Թիւրքիան մտել է քրիստոնեայ Եւրոպան ընդ ամենը մի քանի հարիւր տարի սրանից առաջ և բարբարոսական բռնակալութեամբ շատ յետ է մղել Բալկանեան պետութիւնները, Յունական թերակղզին և Արշիպեղագոսը։ Առաջին անգամ ազատ շունչ քաշողները շնորհիւ Ռուսիայի և Եւրոպայի եղել են յոյները և նրանք առաջինն են յարձակվում և կռիւ ցանկանում»։

Յօդուածագիրը ուզում է հաւատացնել, որ յոյները և բալկանեան միւս ազգերը ոչինչ չեն կորցնի, եթէ մինչև անգամ պատերազմ լինի, որովհետև

«Եւրոպական կոնցերտը սկզբունքով հակառակ է Թիւրք տիրապետութեան ոչ միայն Եւրոպայում, այլ նոյն իսկ Ասիական Թիւրքիայում, պահանջելով ինչ որ ռէֆօրմներ, որ թիւրքերը չեն կարող տալ։ Ո՞վ պէտք է այդ ռէֆօրմները մըտցնէ կեանքի մէջ։ Արդեօք պաշարմամբ մտցնել այդ ռէֆօրմները, թէ ցամաքային զօրքերի ոյժով։ Ըստ իս ուրիշ ոչ մի միջոց չկայ այդ ռէֆօրմներն իրագործելու համար և ոչ մի ռէֆօրմ չէ կարելի մտցնել այնպիսի ժամանակ, մինչև որ Թիւրքիան կըմնայ մահմեդական պետութիւն։ Թո՛ղ քրիստոնէական եկեղեցին կորցրած լինի իւր նշանակութիւնը, թո՛ղ պակասած լինի Քրիստոսին անկեղծ հաւատացողների թիւը, բայց քրիստոնէական քաղաքակրթութիւնը գոյութիւն ունի և չհաւատացողն իսկ հաւատացողի չափ դատապարտում է Թիւրքիային, իբրև մի պետութեան, որ զէնքի բռնութեամբ տիրել է քրիստոնեայ ժողովրդին և չէ կարողացել նրան հասցնել կեանքի այն երջանկութեան, որ քարոզում է մահմեդական քաղաքականութիւնից աւելի մարդասիրական—քրիստոնէական քաղաքականութիւնը.

Դրութիւններ կան ազգերի մէջ, որոնք հաստատ նախագծած են պատմութիւնից և որոնց ժողովուրդն ըմբռնում է բնազդմամբ։ Եւ ո՛չ ոք ու ո՛չինչ չեն կարող խորտակել այն դրութիւնը։ Եւրոպական կոնցերտը հասկանալի է, նըրանց նպատակները—ենթադրելով նըրանց անկեղծութիւնը—շատ գեղեցիկ են, որովհետև այդ նպատակների մէջ են 400 միլիոն եւրոպացոց խաղաղութիւնը և հանգստութիւնը, բայց միևնոյն ժամանակ շատ հասկանալի են այն բոլոր երկիւղները, այդ փոքրիկ ազգերի բոլոր պատերազմական եռանդը, ազգերի, որոնց թիւը մի քանի միլիոնների է հասնում։ Մեծ մարդիկն են սկսել Թիւրքիայի աւերումը։ Ահագին մարդը—Ռուսիան, նրան հասցրեց իւր այժմեան վիճակին։ Այդ ահագին մարդը վաղուց նըրան կործանած կըլինէր և ազատած կըլինէր նրանից Եւրոպան, եթէ վերջինս միշտ արգելք չլինէր և մինչև անգամ չյարձակուէր Ռուսիայի դէմ զէնքը ձեռին։ Սեվաստօպօլը դրան կենդանի վկայ է։ Եթէ այն ժամանակ Ռուսիան չկարողացաւ Եւրոպայի հետ մրցել և իւր համար անհաճոյ դաշն ստորագրեց, այնու ամենայնիւ նա կըկին ոտքի կանգնեց և Թիւրքիան կորտեց ամեն ծայրերից։ Իսկ եթէ Յունաստանը նոյն իսկ չդիմանայ մրցմանը, ոչ ոք նրան չի անդամահատիլ. Այդ բանը Յունաստանն ինքը լաւ գիտէ։ Այդ կոմեդիան Յունաստանի համար, ճշմարիտ է, արիւնալի կոմեդիա է, բայց նա ողբերգութիւն չէ և մահ չէ սպառնում Յունաստանին, այլ խոստանում է կեանք, սահմանների ընդարձակումն, իսկ յոյների երևակայութիւնը հասնում է մինչև Կ. Պոլիս և այնտեղ հանդիպում է բօլղարացու երևակայութեանը»։

Հեղինակն ամենևին չէ զարմանում այդ բանին որովհետև գտնում է, որ

«մեր (ռուս) երևակայութիւնն էլ հասնում է մինչև ծայրագոյն արևելքը»։

Հեղինակը վճռապէս յայտնում է թէ, ինչպէս էլ կուզէ մտածեն, ինչ էլ ուզում են ասեն՝

«բայց եւրոպական կոնցերտից Թիւրքիայի թաղման մարշի ձայնն է լըսվում. . . »

Եւ այս բոլոր գրողը պ. Սուվօրինն է իւր անուան և ազգանուան լիակատար ստորագրութեամբ։

⁂ Բայց տեսէք ահա նոյն «Նով. Վրեմյա» լրագրում ինչ ենք կարդում կըկին այդ նոյն չարաբաստիկ յոյն կրետական խնդրի մասին։ Այստեղ արդէն Սուվօրինի օրգանը, որ իսկոյն խօսում էր յանուն քրիստոնէութեան և ազգերի «զգացմանց» և «իրաւանց» ասում է՝

«Մենք շարունակում ենք մտածել որ ինչքան էլ որ ցաւալի լինի ինքն ըստ ինքեան քրիստոնեայ պետութեանց տեսակէտից իրանց վարմունքը, որոնք ըստիպուած են Թիւրքոյ կողմը բռնել իրանց հաւատակից քրիստոնեաների դէմ, Կրետէում պատահած անցքերը չեն կարող ազդել արևելեան գործերի վիճակի վրայ։ Կրետէն վերջ ի վերջոյ . . կըխաղաղացուի. . .

Ահա այս տողերն են որ «Նով. Վր.» համարում է «շարունակութիւն վերև բերուած տողերի...

⁂ Այլ կերպ է մտածում «Սին. Օտեչ.» ռուսական թերթը, որ այլևս չէ հաւատում Թիւրքիայի վերակենդանութեան՝ որովհետև

«Բալկանեան թերակղզում կրքերն այնքան են բորբոքուած, մտքերն այնքան են գրգռուած, որ պայթումն կարելի է սպասել ամեն վայրկեան։ Եւ երբ հըսկայական հրդեհը կըտարածուի ամբողջ թերակղզում, այն ժամանակ Եւրոպան պարտաւորուած կըլինի հրաժարուել իսլամների վեհապետի հաւատարիմ դաշնակցի դերից և մտածել այն դարաւոր աւանդութեանց մասին, որոնք կապուած են կիսալուսնի գոյութեան և անկման հետ։ Դեռ երբեք Արևմուտքը այսչափ ձեռք ձեռքի տուած չէ գնացել Արևելքի հետ, յանուն օսմանեան պետութեան ամբողջութեան, բայց, աւա՛ղ, ճակատագիրն իւր օրէնքներն է առաջ բերում և օսմանեան պետութեան ամբողջութեան համար դիպլոմատիայի հնարած բոլոր միջոցները միայն դէպի անխուսափելի վտանգն են առաջնորդում»։

⁂

Խոստացել էինք ծանօթացնել մեր ընթերցողներին «Պետ. Վեդ.»-ի մի լուրջ յօդուածի հետ, որ վերաբերում է այսպէս անուանուած և ըստեղծուած «Հայկական հարցին Կովկասում»։

Յարգելի լրագիրը ղեկավարուելով այն տեսակէտով, թէ «ռուս պետութեան շահերը պահանջում են պարզ և հաստատ հայեացք սահմանել և որոշել պետութեան սահմանագլխի երկիրների վրայ», գտնում է որ Կովկասի, մանաւանդ հայերի վերաբերմամբ կազմուել է մի շատ սխալ հայեացք։

«Բազմիցս—ասում է լրագիրը—իշխանութեանց հոգ և տհաճութիւն պատճառող և միջազգային տեսակէտից հրապապ ու մեզ համար կարևոր «հայկական խնդիրը» Կովկասում այն թիւրիմացութիւններից մէկն է, որոնց ստեղծում են կաբինետային ջանքերը և վերացական դատողութիւնները և որոնց համար անպարտ է և անմեղ բուն խնդը, երկրի կեանքը։ Դէպի մի քանի փաստերը և անձնաւորութիւնները եղած կանխակալ նախապաշարմունքները երբեմն այնքան խոր հիմունքներ են բռնում, որ մինչև անգամ ամօթ է լինում յիշել նրանց։ Մի կարգ լուրեր և խօսակցութիւններ այն մասին թէ՝ որչափ վնասակար թշնամութեամբ սնուած է և որքան մահաբեր է Ռուսիայի համար Կովկասում հայկական տարրը—այնպիսի խիստ կերպարանքով տարածուած են և տարածվում են, ամբողջ պետութեան մէջ գրգռելով կառավարչական շրջանների դժգոհութիւնը, մինչափ են տարածուած, որ ամեն մի լուրջ խօսք դեռ մեր մէջ չէ կարող չուտով արձագանք ստանալ։ Այդ բանին խանգարում է և «Նենգամիտ Անգլիան», որ «գրգռում է Փոքր-Ասիական ապստամբութիւնը և հայերի կենսունակութիւնը», հայերի, որոնք ամեն տեղ առաջ են ընկել քնաթաթախ վրացիներից, քաղաքակրթութեան անընդունակ մահմեդականներից և ակամայ Կովկաս գաղթած և դեռ երկրին չընտելացած ռուսներից...

Սակայն չնայելով այդ յամառ կարծիքներին, լրագիրը գտնում է թէ խնդիրը շատ պարզ է և ահա թէ ինչու.

«Չէ կարելի ռուսական պետութեան սահմաններում ապրող հայերին բոլորովին օտար համարել այդ ազգի այն մասին, որ ապրում է սահմանակից պետութիւնների մէջ և կարողացել է 1500 տարուց աւելի շրջապատող բարբարոս ազգերի լծի տակ լինելով հանդերձ՝ պահպանել իւր քրիստոնէական դաւանանքի լոյսը և աւելի լաւ ապագայի ծարաւը։ Այդ ազգի մէջ առաջինը, այսինքն քրիստոնէութիւնը՝ պահպանուել է շնորհիւ հայ-լուսաւորչական հոգևորականութեան տոկունութեան, իսկ լաւ ապագայի յոյսը պահպանուել է նրանց մէջ, որովհետև հարևան մահմեդական պետութիւնները հետզհետէ սկսել են քայքայուել։ Ռուսիայի աւանդական քաղաքականութեան ծրագրի մէջ է եղել միշտ Կովկասեան և Փոքր-Ասիական քրիստոնեաների մէջ վառ պահել նրանց զգացմանց սրբութիւնը և ասիական մոլեռանդ բնակալներից ազատուելու հաւատը։ Այդ զգացմունքով ներշնչուել են, յանուն այդ զգացմունքի գործել են, այդ զգացմունքը կեանքում քարոզել են ամենքը, որոնք հեծում են իսլամի երկաթեայ լծի տակ։

Յարգելի լրագիրը պնդում է թէ Ռուսիան դէպի հարաւ ձգտելով և իւր արեան գնով նոր երկիրներ գրաւելով՝ անմտութիւն կլինէր գործած, եթէ չօգտուէր այդ ույժերից, ուստի՝

«Զարթելով սլաւոններին, յոյներին, վրացիներին, զարթեցնելով և պաշտպանելով նրանց սրտում ձգտումներ դէպի ինքնուրոյնութիւն, հիւսիսային մեծ պետութիւնը—Ռուսիան—իւր զարգացման հետ հաւասար ընթացքով զարգացնում էր ազգայնութեան զգացմունքը այն աշխարհներում, որոնց ազատում էր բարոյական չղթաներից։ Նոյն իսկ մեր (ռուսական) ինքնաճանաչութեան բոցից վառուեցին փոքր ազգերի ինքնաճանաչութեան փոքրիկ ճրագները այն ազգերի սրտերի մէջ, որոնց մենք ինքներս հրաւիրեցինք դէպի նոր կեանք։ Ահա եւ այսպիսի պայմանների մէջ ծագեց այսպէս անուանուած հայկական խնդիրը»։

Այսպիսով ամենայն բարեխղճութեամբ և պատմական փաստերի ճշտութեամբ ապացուցանելով հայ ժողովրդի մէջ ծագած զգացումը, յարգելի լրագիրը բնական է գտնում, որ թուրքի լծի տակ տանջուող հայերը ձգտեն դէպի ազատութիւն այդ լծից և ռուսահպատակ հայը ցաւակցի իւր եղբօր վշտին, միաժամանակ մնալով հաւատարիմ իւր պետութեանը, որի շահերին նա միշտ նուիրուած է եղել և երբէք

«դրանցից և ոչ մէկը մաքիցն անգամ չէ անցկացրել որևէ սեպարատիզմ, որևէ առանձին ձգտումն, սիստեմատիքական բաժանումն.»

Իսկ եթէ պետութեան մէջ եղել են իբրևիցէ այդպիսի երևոյթներ, այն էլ եղել են

«նոր տեսակի ռուսացնողների չափազանց անմիտ եռանդի շնորհիւ։ Եւ երբ այդ հանգամանքը լաւ հասկացուի, այն ժամանակ շատ դիւրին կլինի և հասկանալ Կովկասին վերաբերեալ խնդիրները»։

Ապա դառնալով մայրաքաղաքի և տեղական ռուս լրագրների ստայօդ մեղադրութիւններին, թէ հայերը ամբողջ Կովկասեան վարչութիւնը, հողերը, առևտուրը եայլն իրանց ձեռքն են առել, յարգելի լրագիրը պաշտօնական աղբիւրներից առած անհերքելի թուանշաններով կատարելապէս ապացուցանում է այդ մեղադրութեանց սուտութիւնը և անբարեխղճութիւնը, ցոյց տալով, ընդհակառակն, թէ հայերը չնայելով իրանց ծայրայեղ ընդունակութեանց, հեռացրուած են շատ ասպարէզներից։ Այդ թուանշանները մենք առաջ չենք բերում, որովհետև նրանք արդէն ծանօթ են մեր ընթերցողներին։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ԹԱՒՐԻԶ, 8/20 մարտի.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Երէկ մարտի 8. Թեհրան ուղևորուեց Ատրպատականի ընդհ. կուսակալ Էմին-Դովլէն, ուր կանչուած է շահից Սադրազամի պաշտօնով (մինիստր նախագահ)։

Վսեմապատիւ Էմին-Դովլէն ներկայ պաշտօնեաների մէջ զարգացած և ուղղամիտ մի անձն է։ Բուն պարսիկ է։ Իւր ֆրանսերէնի կրթութիւնը ստացել է հայազգի Միրզա Բաբսեղ խանի մօտ (որ այժմ Թիֆլիզի Պարսից հիւպատոսի կարծեմ առաջին դրագոմանն է) և ապա դիւանական ծառայութեամբ 10—15 տարի Եւրոպայում, գլխաւորապէս Փարիզում է մնացել։

Լաւ ծանօթ է քաղաքակրթութեան, և ինքը լուսամիտ մի անձն է։ Մի ամբողջ տարի չէ, որ նշանակուել էր Ատրպատականի ընդհ. կուսակալ և այստեղ էլ ցոյց տուեց իւր կառավարչական հմտութիւնը։ Անցեալ տարի նախարարական խորհրդի մէջ էր և նախկին Սադրազամի ախոյանն էր համարվում։

Վսեմ. Էմին Դովլէն իւր խելքով և ընդունակութեամբ, տէրութեան հաւատարիմ ծառայութեամբ հասաւ այդ պաշտօնին և արժանի է։

Առաջին անգամն իսկ նրան տեսնելով կարելի է ասել, որ նա ունի լուրջ, խոհուն դէմք, թափանցող հայեացք, խոր միտք։

Թաւրիզ ժամանելու օրից նա խնդրում էր շահնշահ Մուզաֆար-Էդինից, որ իրան հեռացնէ այս պաշտօնից, որովհետև Թաւրիզը կարգի ենթարկուող չէ։ Կենսական մթերքների թանգութեան դէմ արմատական միջոցներ ձեռք առաւ, բայց հարուստ կալուածատէրերը մեծ խոչընդոտ եղան նորան։

Երևակայեցէք, որ հարուստ կալուածատէրերը ոչ միայն գարին, ցորենը, ածուխն են ամբարում, այլ մինչև անգամ ձուն, որպէսզի ձմեռը թանգ վաճառեն։ Այս տարի 3 հատը 4 կոպէկ ձու է ծախւում։

Ատրպատականի ընդհ. կուսակալ նշանակուած է Էմիր Նիզամը, որ նոյն պաշտօնը վարել է ամենայն խոհեմութեամբ 1885—1891 թւից. և հեռացուել է Ռէժիի ծխախոտի գործի յայտնի խնդիրներից յետոյ։

Էմիր Նիզամը այժմ մօտաւորապէս 85—90 տարեկան կլինի։ Շատերը ընթերցողներից կզարմանան թէ ինչպէս 80—90 տարեկան զառամեալ մարդը պաշտօնի է կոչվում։ Այո՛, զարմանալի է, բայց ոչ Պարսկաստանի համար, ուր այդպիսի անկաշառ և տէրութեան հաւատարիմ անձինք հազուագիւտ են։ Էմիր-Նիզամը այդ հազուագիւտ անձինքներից մինն է։ Ինքը ժողովրդասէր, իրաւարար և արդարասէր է։ Նրա նախկին դատաւորութեան ժամանակը այժմ կարօտով է յիշվում։ Իւր արդարասիրութեամբ վաստակել է մեծ ժողովրդականութիւն Ատրպատականի մէջ։ Մինչև ներկայ պաշտօնիս կանչուելը նա Սինայի նահանգապետն էր, որի ժողովուրդը մի խստաբարոյ և պաղան, տարօրինակ բնաւորութեան ժողովուրդ է։ Թէև նա արդէն զառամած հասակ ունի, բայց այնքան ուժ և եռանդ, որ մինչև մահը իւր անձը նուիրել է շահի ծառայութեանը։ Ինչպէս որ ինքը հեռագրով յայտնել է պատրաստակամութիւնը, սակայն մի պայմանով, որ բացարձակ տէր լինի։ Այս բացարձակութիւնը անհրաժեշտ է այսպիսի մի երկրում։ Որովհետև գահաժառանգը Թաւրիզում մնալով յաճախ միջամտում է կուսակալի գործերին և կառավարչական կարգը խանգարում։ Էմիր Նիզամի նախընթաց կուսակալութեան ժամանակ Մուզաֆֆար-Էդդին շահը գահաժառանգ էր և Թաւրիզում էր բնակվում և իւր բարեսրտութեան համար աշխատում էր պատիժը սպանութեամբ չլինի. բայց այն ժամանակ էլ Էմիր-Նիզամը դիմել է հանգուց. Նասր-Էդդին շահին և բացարձակ իշխանութեան իրաւունք է ստացել։

Ատրպատականի հայուհեաց բարեգործական ընկերութեան անդամուհիները իրանց ընկերութեան դրամագլուխը մեծացնելու համար այս քանի օրս ժողովարարութեան են ելեր։

Ի դէպ, Թաւրիզում կանանց երկու «բարեգործական» ընկերութիւն կայ, բայց կան հիւանդներ, որոնք անտէր մեռնում են և 5—6 ռուբլի չեն ծախսում վերցնելու։ Այսպիսի օրինակներ եղել է անցեալ տարի։ Թէև սկզբից յայտարարում են, թէ այդպիսի դէպքում դիմեցէք, իսկ դիմելիս ձեռնունայն...։

Մար-Նա։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲՈՒԼՂԱՐԻԱ.—Բուլղարիան Սերբիայի և Չեռնոգորիայի հետ մերձենալուց յետոյ աշխատում է միևնոյն ժամանակ բարեկամանալ և Յունաստանի հետ։ Քաղաքական աշխարհում այդ բացատրվում է նրանով, որ Թիւրքիայի բաժանման դէպքում Բուլղարիան ցանկանում է ստանալ Մակեդոնիայի մի մասը առանց այդ առթիւ որևէ ընդհարումն ունենալու Յունաստանի հետ։ Ինչպէս յայտնի է Բուլղարիայի ուսանողները հեռագրներ փոխանակեցին Աթէնքի յոյն ուսանողների հետ կրետական անցքերի առթիւ և Աթէնքից ստացուած պատասխանի մէջ ի միջի այլոց կային հետևեալ խօսքերը. «Միայն Բալկանեան քրիստոնեայ ազգերի եղբայրական համաձայնութիւնը կարող է ապահովել նրանց ազատութիւնը»։ Եւ ահա այդ հեռագրները առիթ են տալիս բուլղարական «Պրոգ.» լրագրին տպագրելու հետևեալ տողերը. «Այդ հեռագրները մեզ վրայ հաճելի տպաւորութիւն գործեցին, շատ բան է մեզ հարկադրում ուրախանալ։ Բուլղարների և յոյների մէջ մրցումը և թշնամութիւնը շատ հին է և բղխում է այն օրից, երբ բուլղարներն առաջին անգամ երևացին Բալկանեան թերակղզու վրայ։ Եթէ բուլղարները և յոյները միմեանց չթշնամանային, գուցէ ընկած չլինէին թուրքերի իշխանութեան տակ և անշուշտ այժմ քաղաքակրթութեան կողմից անհամեմատ բարձր կլինէին։ Չնայելով եկեղեցական ցաւալի վէճերին, բուլղար և յոյն երիտասարդները ապացուցեցին, որ միատեսակ են մտածում ընդհանուր թշնամու դէմ և լրագիրը յոյս ունի, թէ չէին կրօնական թշնամութիւնը և կ'ոչնչանայ բոլորովին, երբ բուլղարական սահմանը հասնի յունական սահմանին։

ԶԱՆԱԶԱՆ

Սուլթանի զրահաւորները։ Վերջերս Կ. Պոլսի ոսկեղջիւրից թուրքական մի քանի մարտանաւեր ճանապարհ ընկան Դարդանէլ գնալու, հեղնութիւնների և քննադատութիւնների տարափների ներքոյ։ Նաւերից մէկի թուրք հրամանատարը ցաւով հետևեալ դիտողութիւնը յայտնեց. «եթէ կաթսայի տաքութիւնը բարձրացնեմ, կաթսան կը պայթի, եթէ չբարձրացնեմ նաւը կկանգնի»։ Շատերը այս խօսքը յարմարեցնում են Թիւրքիայի ներկայ դրութեան։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Դուկիս, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) և ներքին հիւանդութիւնների։

Կ. Մ. ԶԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ԴՈՒՆԱՑԵՎԱ-ԲՈՒԴԵՆԿՈ—11—12 ժ. կանանց և երեխայոց հ.

Ձ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ.—10—11 ժ. կանանց հ. չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ, իսկ 1½—2 ժ. երկուշաբթի, երեքշաբթի և հինգշաբթի.

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ.—6½—7½ ժ.

Հիւանդանոցումը քիմիական և խուզարկական հետազօտութիւն են անում մէզի, խխի, արեան, կաթի եայլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ։

ՎԻՐԱԲՈՒԺԱԿ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Մշտական մահճակալների բաժնով
ԴՈՔՏ. Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎԻ
(ՆԱԽԿԻՆ ԴՈՔՏՕՐ ԿԱՐԳԵՋԵՆԿՈՅԻ)
Սօլօլակ, Գանովսկայա փողոց, № 3
Հիւանդների ընդունելութիւնն ամեն օր։

Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎ, ժամը 10—12 վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների։

Փ. Վ. ԶՈՒԴՆՈՎՍԿԻ, ժամը 12½—2, վերաբուժական և մէզի հիւանդութիւնների, (երկուշաբ., չորեքշ., ուրբաթ և կիւրակէ օրերը)։

Ե. Գ. ԴԵԼՈՎ. ժամը 12½—1½. Ջղային հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշաբ. և ուրբաթ օրերը)։

Փ. Կ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ, ժամը 1—2, մանկաբարձական և կանացի հիւանդութիւնների (երկուշաբ., հինգշ. և շաբաթ օրերը)։

Դ. Ի. ՕՍՏՐՈՎՍԿԻ ժամը 12—1, ներքին հիւանդութիւնների և ծաղկի պատուաստումն (երեքշաբ., հինգշաբ. և շաբաթ օրերը)։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ, ժամը 12½—2, ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւնների (չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Ի. Ե. ԱԻԵՏԻՍՈՎ, ժամը 12—1, մանկաբարձական և կանանց հիւանդութեանց (չորեքշ., ուրբաթ և կիւրակէ օրերը)։

Ա. Ե. ՖՕՆ-ԲՐԵՆՆԵՐ, ժամը 12—1, ատամնաբուժութեան, նաև ատամ մաքրելու, լցնելու և արհեստական ատամներ դնելու։

Ա. Ն. ԳԷՆՑ, դեղագործութեան մագիստրոս, մանրադիտակով քիմիական և բակտերիօլոգիական հետազօտութիւններ է կատարում — հետազօտութիւն մէզի, խորխի, արեան, կաթի եայլն։

Հիւանդների ցանկութեամբ համախորհուրդ է լինում։ Բուժարանում կան բաժանմունքներ՝ մարմնամարզական — մասսաժի և ոսկրաբուժական։

Խորհրդի համար վճարը, ինչպէս նաև ծաղկի պատուաստման համար, 1 ռուբլի է։

Աղքատների համար ձրի է։ Համախորհուրդների, անդամահատութեան մասսաժի, մշտական մահճակալի, ելեքտրականութեան, լողարանի և ցնցուղի համար առանձին համաձայնութիւն պէտք է կայացնել։

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ հրատարակում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ սոյն մարտի 24-ից **ՊԻՏԻ ՍԿՍՈՒԻ ՈՉՆՉԱՑՆԵԼՆ** այն փողոցային թափառական շների, որոնք վզնոց չեն ունենալ. այդ մասին տեղեկացվում է շների տէրերին, որոնք ցանկանան իրանց շներին պահպանել ոչնչացնելուց։ (1—1)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ՌՕՍՍԻԱ“
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1881 Թ.
Ս.-Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 25,500,000 ռ.
Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետակ. բանկում։

Ընկերութիւնն ընդունում է՝

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
այսինքն դրամագլուխների և եկամուտների, ապահովելու ընտանիքը կամ սեպհական ծերութիւնը, բաժինքը աղջիկների համար, թոշակները տղաների համար և այլն, առանձին շահաւէտ պայմաններով և ապահովագրողների մասնակցութեամբ Ընկերութեան օգուտներին։
1896 թուի յունվարի 1-ին «ՌՕՍՍԻԱ» ընկերութեան մէջ ապահովագրուած էին 35563 անձինք՝ 91,406,948 ռուբլի դրամագլխով։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱԽՏ ԴԷՊՔԵՐԻՑ
առանձին անձինքների, նոյնպէս և համագումար ապահովագրութիւններ գործարաններում ծառայողների եւ բանուորների,—պակասացնելով ապահովագրական վճարները, դիվիդենտի փոխարէն։

ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
ամեն տեսակ շարժական և անշարժ կալուածքների (շինութիւնների, մեքենաների, ապրանքների, կահ-կարասիքների, եայլն։

ՏՐԱՆՍՊՕՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
գետային, ցամաքային եւ ծովային. ապահովագրութիւն նաւերի։

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Վարչութեանը Ս.-Պետերբուրգում (Большая Морская, սեպհական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան Վարչութեան մէջ, որ գտնվում է՝
ԹԻՖԼԻԶՈՒՄ, Սերգիեվսկայա փ. տ. № 6. և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում։
Ապահովագրութեան տոմսակներ՝ ճանապարհորդներին ապահովագրելու համար դժբաղդ դէպքերից՝ երկաթուղիներով և շոգենաւերով ճանապարհորդութեան ժամանակ տրվում են նոյնպէս երկաթուղիների կայարաններում և շոգենաւային նաւահանգիստներում։ (50—26)

Bateaux a vapeur Français „N. PAQUET ET Cie“

Ֆրանսիական շոգենաւային ընկերութիւն
„Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն կլինի ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկիզբը յունվարի 29/10-ի չորեքշաբթիից, և

ԲԱԹՈՒՄԻՑ ԴԷՊԻ ՄԱՐՍԷԼ՝ ՏՐԱՊԻԶՈՆԻ, ՍԱՄՍՈՆԻ ԵՒ Կ. ՊՈԼՍԻ ՎՐԱՅՈՎ

Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, ապրիլի 2/14 ԱՐՄԷՆԻ շոգենաւը, նաւապետն է ԲՈՒԼԸ,

և այսպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, երեկ. 4 ժամին

Բաթումից—Փարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ, գինը սովորականից պակաս է լինում։

Ապրանքների և ճանապարհորդների մասին պէտք եղած տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին

Բաթումում.—Վիկտոր դ'Արնոյին, Նաբերեժնայա։
Թիֆլիզում.—Պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Որբելի փողոց, նախկին Արծրունու քարվանսարա։
Բագւում.—Պ. Ս. Դիլղարեանին, Կոլիւբակինի հրապարակ։
Նովօրոսիյսկում.—պ. Մելքիօր Հերշենրօդերին։ (20—7)

ԼՈՒՍԱՅԱՏ եւ ԳԶԱՏ ԲՈՒՐԴ
Օթոցների, վերմակների
ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՅԼ ՊԻՏՈՅՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՄԱՔՐԱԾ ԵՒ ՊԱՏՐԱՍՏԱԾ
ԱԼ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԵՐՈՒԱՆԴ ՄԱՆԴԻՆԵԱՆՑԻ
ՇՈԳԵՇԱՐԺ ԼՈՒԱՑԱՐԱՆՈՒՄ
ՀԵՌԱԽՕՍ № 168.
Ցանկացողները կարող են դիմել Միքայէլեան փողոց, ԱԼ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ ծխախոտի խանութը, (ոչ հեռու Վօրօնցովի արձանից)։ (50—19)

ԱՄԵՆԱԸՆՏԻՐ ԱՂ
ԿՈՂԲԱՅ ԱՂԱՀԱՆՔԻՑ
Յատկապէս ՍԵՂԱՆԻ և ԿԵՐԱԿՐԻ համար պատրաստած
ԵՐՈՒԱՆԴ ՄԱՆԴԻՆԵԱՆԻ
ՇՈԳԵՇԱՐԺ ԱՂՕՐԻՔՈՒՄ
Վաճառվում է ԹԻՖԼԻԶԻ առաջնակարգ բօկալէյնի խանութներում։
ՀԵՌԱԽՕՍ № 168.

№ 1. ՍԵՂԱՆԻ ՀԱՄԱՐ

Կէս փունտանոց փաթեթը	5 կ.
Մէկ փունտանոց »	8 կ.
ՏԱՍԸ փունտանոց քսակը	75 կ.

№ 2. ԿԵՐԱԿՐԻ ՀԱՄԱՐ

Մէկ փունտանոց փաթեթը	6 կ.
ՏԱՍԸ փունտանոց քսակը	30 կ.

Մեծ քանակութեամբ գնողների համար առանձին զիջումն է լինում։
Առաջնակարգ հիւրանոցները եւ ուշադիր տանտիկնայք, որոնք կամենում են պատուել իրանց հիւրերին, պէտք է անպատճառ սեղանի վրայ ունենան այս ընտիր և ձիւնի պէս սպիտակ աղը, որ պատրաստվում է Կողբայ հանքի ամենաընտիր և «ասպակեայ» կոչուած աղից։
Օտարաքաղաքացիք կարող են դիմել Թիֆլիզ այս հասցէով՝
(50—23) Ервангу П. Манденову.

Дозволено цензурою, Тифлисъ 22-го Марта 1897 года.
Տպարան Մնացական Մարտիրոսեանցի։
Типографія М. Мартиросянца. На Михайловской ул. № 81